Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

222-2015
223-2015
224-2015
225-2015
226-2015
227-2015
228-2015

К. Ц.

[illegible]

[illegible]

2111

рукопись
222-228

4 [illegible]

1911

451
64.
2003

ՇԷՔՍԲԻՅՐ

ԱՍՏՂԻԿ ԵՒ ԱԴՈՆԻՍ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ
ԱՐԹԱՌԻ ՀԱՄԲԱՐԳԱԹԱՆ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ
— 1886 —

ՇԷՔՍՊԻՅՐ

ԱՍՏՂԻԿ ԵՒ ԱԴՈՆԻՍ

88



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԱՐԹԱՌԻ ՀԱՄԲԱՐՁԱԲԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

— 1886 —

1322

(6882-57ց)

227-2015
Ա 227

ՄԻ ԲԱՆ

Մեծահանճար անգղիացի բանաստեղծիս սոյն սրտառուչ եւ գեղապաճոյճ քերթուածն 'ի մեր լեզու փոխելով յոյս մեծ ունիմ թէ բազում զգայուն եւ թրթռուն սրտից հաճելի թուի։

Տայր թէ այլք եւս այց առնէին բարձրաթռիչ պուէտիս չնաշխարհիկ պարտէզն՝ քաղելու ընտիր ընտիր ծաղկունք եւ տալ հաշակել մերազնէից։

Կ. Պոլիս 1886 Ա. Հ.

TO

My gentle and sympathic professor

Percy Edward Pinkerton.

ԱՍՏՂԻԿ ԵՒ ԱԴՈՆԻՍ

—oo—

Այն ինչ արեգակն կուգայր յաջորդելու արտասուաթուրմ արշալուսոյն, վարդագէմ Ադոնիս կը վազէր յորս հաճոյառութիւն. որսալն էր իւր սէր, իսկ զսէրն անարգանօք կ'ատէր։ Աստղիկ դրդեալ 'ի խորոց սրտի, կ'երթայ նորա յանդիման, որպէս տարփածու անպատկառ, իսկոյն կը քծնի առ նա։

«Դու որ երիցս քան զիս գեղեցիկ ես, —այսպէս սկսի, — առաջինն ծաղկանց դաշտին, անզուգելի և աննման քաղցրութեամբ, դու որ մթագնես զպայծառութիւն Յաւերժահարսանց, քան զայր ոմն հրաշագէմ, քան զաղաւնիսն ճիւնափայլ և քան զվարդ փոսորագեղ, ընութիւն զոր ստեղծեց քեզ, հակառակ իւր խօսելով, կ'ըսէ թէ քո կենաց հետ աշխարհ ևս պիտի չիջանի։

«Ո՛հ հաճեաց դու զարմանահրաշդ, կասել զընթաց երիվարիդ, և խոնարհեցնել նորին գլուխ. եթէ չըզլանաս ինձ ընել զայդ շնորհ, մերկացին քեզ 'ի վարձ բիւր գաղտնիս մեղրանման. ե՛կ և նստէ աստ ուր ոչ երբէք պեց լիմն, զի գամ մի աստ նստիս, պիտի խեղդեմ զգեզ 'ի համբոյրս...

«Սակայն չրթունքդ չպիտի խոնջին համբոյրներէս դարշախառն յափրանօք, այլ ընդ հակառակն որչափ յաւելին համբոյրք՝ նոյնչափ չրթունք պիտի քաղցնուն, և շարունակ յայն կրկնութիւն մեծանորոգ չիկնագոյնն պիտի փոխի 'ի դալուկ· տասն համբոյր միոյ նման լիցին կարճատեւ, իսկ մին քսանի չափ երկայն։ Վատնեալ 'ի խաղս այսպէս որ պատրեն սոյն կէտիս ժամանակն, ամառնային մի օր յոյժ վաղանցիկ ժամ մի պիտի թուի»։

Հուսկ ապա բռնեց նորա տամուկ ձեռն, նշան հիւթոյ և ջերմութեան, և դողդոջուն տուփտա կրքերով, բաղասան կ'անուանէ զայս, սպեղանի գերագոյն առ 'ի բուժել դիցուհի ոք· դիւահար, իւր խանդ, ոյժ և քաջութիւն կուտայ նմա կորզելու զնա յերիվարէն։

Միով ձեռամբ կ'ամրապնդէ երագոտն կենդանւոյն զերասանակն, միւսովն վարի գեղեցկագէմ պատանւոյն, ուր չիկնեալ կը դիտէ զնա խոժոռ և տհաճ հայեացքով մը՝ հեռի յախորժակաց և գգուանաց արհեստէ։ Աստղիկ ջերմ և կարմրավառ զերդ ածուխ հրաբորբոք, իսկ նա շառագունեալ յամօթոյ, այլ սառնանման հանոյից մէջ։

Կը յաջողի ճարպիկութեամբ գամազարդ երեսանակն ոստոսիտ ճիւղոյ մը անցնել· — Քանի՛ աչքոյդ է սէրն — նժոյգն կաշկանդեալ, կը ջանայ ընդ հուսկ նորա հեծեալն իսկ կաշկանդել· կը մղէ զնա թիկանց վրայ, այնպէս կարծես կամէր

գետին գլորել, և կը յաջողի գէթ ուժով եթէ ոչ ցանկութեամբ։

Այն ինչ թէ նա գետին կը փռուի, Աստղիկ ևս նորա կողն 'ի վեր կը տարածուի, երկուքն ևս արմկանց վրայ յեցած, ահա կը շոյէ անոր այտերն, իսկ Ադոնիս զայրացած կը սլաստէ յոնքերն, բայց նա կ'արգելու և գիրկընդխառն համբուրիւք, կ'ըսէ դողդոջ և վաւաշում ձայնիւ մը, եթէ սատել կ'ուզես, մի՛ բանար բնաւ չրթունքդ։

Ի հուր կը փոխուի յամօթոյն, Աստղիկ արտասուօքն կը շիջուցանէ զկուսագեղ այտից հուրն և հուսկ կը ջանայ հառաչանաց շողւով և ոսկեհեր խոսոսիքներով ցամքեցնել զայնս։ Անսարկեշտ ես, կըսէ Ադոնիս և կը քամահրէ նորին չարութիւնը· այլ զայս ամեն բաներ ինք համբոյրներու մէջ կը խեղդէ։

Ինչպէս արծիւն սովալուկ 'ի քաղցութենէ գրգռեալ և թօթափելով զթեւս կը լափէ հապշտապ, հարկանէ կոցաւն վիեռուր, մարմին, ոսկր մինչև որ յագենայ կլլտալինդ և կամ մինչև որ աւարտի որսն· այսպէս և նա կ'սպառէ 'ի համբոյրս ճակատն, այտերն, կզակն, և երբ լմննայ՝ վերսկսի։

Հարկադրեալ թոյլ տալ, այլ մերժելով հնազանդիլ, արտասրուի գետնատարած երեսն ի վայր կը շնչէ զոդ։ Կը ճարակէ զայս շոգի որպէս, որսն

և երկնային տամկութիւն կոչէ զայն, այեր քաղցրախորժ, և կը մաղթէ թէ նորին այտք մի ծաղկազարդ բուրաստան լինին նմա, որպէս զի ոռոգուին այսօրինակ թորմամբ անձրեւի։

Տե՛ս, ինչպէս թռչուն ի ծուղակ մոլորեալ, այսպէս և Ադոնիս նորա թեւոց մէջ շղթայապիրկ, իւր մաքրափայլ ամօթխածութիւն և խոնարհ ընդդիմութիւնն յոչ կամս տարուբերեն զինք, որով առաւել ևս փայլի իւր դրդռեալ աչաց դեղն. թող անձրեւն տեղայ 'ի գետ յորդահոս որ անշուշտ պիտ՝ ողողէ զիւր ափունս։

Թախանձէ միշտ զարմուհին, ազնուապէս թախանձէ, զի փափկալուր լսելեաց է որ կ'ուզղէ իւր աղօթքն. այլ նա քրթմնջող, կ'սպառնայ յար, ամօթոյն շիկնութիւն և զայրոյթին մոխրագոյն դեղնութիւն կ'երեւին դիմաց վրայ կարգաւ. երբ կարմիր այնչափ յոյժ կը սիրէ զինք, իսկ երբ դալկանայ՝ կ'աւելնայ այս այնչափութիւն նորեռանդ խանդով մի։

Ինչ դէմք որ այլ առնու, կը սիրէ դարձեալ, և 'ի գեղաթաթ ձեռնամնահ կերդնու չբաժնուիլ երբէք նորա փափուկ կուրծքի վրայէն. մինչեւ չհաստատէ դաշամբ հեղահոս արտասուաց հանդէպ որ ընդ երկար ողողեցին այտերն, մի հեշտ համբուրիւ թող վճարեալ լինի անհամար արտասուաց պահանջ։

Այդ խոստման վրայ Ադոնիս վեր կ'առնու կը-զակն նման հոզամաղին որ բարձրացնելով զգլուխն յալեաց, բայց երբ զինք դիտեն, վերատին փութով ջուրը կը մարմի, այսպէս և ինք կը նուիրէ զոր ինչ խնդրէ գեղուհին, իսկ երբ չրթունք պատրաստուին ընդունել իւրեանց վճար, ոչերն գոցելով մի կողմ կը դարձնէ գլուխն։

Երբէք ուղեւորն ամառնային տօթակէզ օդոյն այնչափ ջրոյ ծարաւի չէր լիներ՝ որչափ նա այս չնորհաց, կը դիտէ իւր դարման, այլ զոյն չկրնար ստանալ, կը լուացուի ջրի մէջ, սակայն իւր հուրն չի դադրիր զինք այրելէ. «դթութիւն, սկսաւ հեծել, քարասիրտ տղայ, հաճոյր մի միայն կը պաղատիմ, է՞ր տատամսիս։

«Բծնեցաւ, ինչպէս կը քծնիմ այս ժամուս քեզ մօտ, խոտաբարոյ և ահարեկելի աստուածն ճակատամարտի, որ բազուկն յաղթանդամ և անպարտ տանէ յաղթանակ իւր գտնուած ամեն կռուոյ դաշտի մէջ, և սակայն իմ կալանաւոր և գերին եղաւ, մուրացս զոր ինչ պիտի ստանաս դու առանց մուրալոյ։

«Իմ խորաններու վերայ կախեց զիւր նիզակ, 'ի հարուածոյ կորացեալ ասպարն և խրոխտ զիւր դարգմանակ, առ 'ի սէր իմ ուսաւ նա խաղալ, պարել, զուարճաբանել, կատակել, զբօսնուլ, ժպտիլ, անարգելով զիւր թմբուկ աղմկալից և

կարմրերանգ դրոշն, իւր դաշտ գրկաց մէջ գը-
տաւ, իւր վրան անկողնոյս մէջ։

«Այսպէս տիրեցի նմա որ հանուր օրէնքներ
կուսայր, և բոսորագեղ 'ի վարդեաց շղթայս
կաշկանդեցի զնա. երկաթամուխ պողպատն հը-
նազանդէր նորա հուժկու և կորովի զօրութեան,
այլ սորուկ իմ ցուրտ նախատանաց առջեւ։ Ո՛հ
մի՛ լինիր գոռող, և մի՛ պանծար 'ի կարողութիւնդ,
զի կը տիրես դու նմա որ ընկճեց պատերազմաց
զաստուածն։

«Մօտեցուր միայն շրթանցս քո գեղեցիկ շրթ-
ներ, եթէ իմինք չեն այնչափ գեղեցիկ, վարդա-
գոյն են սակայն և համբոյրն որչափ քեզ նոյնչափ
ինձ պիտի յատկանայ. —զի՞նչ կը դիտես դեռինն,
վերցուր գլուխդ, յաչս իմ նայէ, անդ կը ցոլայ քո
գեղեցկութիւն. ուրեմն է՛ր ոչ շրթունք շրթանց
և աչկունք աչաց։

«Կամաչես զիս գիրկընդխառն համբուրելու,
գոցէ՛ ուրեմն զաչերդ, և ես զիսն փակեմ,
այնպէս թէ գիշեր լինէր, որպէս զի առնու
սիրոյն սիրոյ հանդէսք, երկու հրաւիրեալք բաւ
են անդ, խաղայ աներկիւղ, ոչ ոք կը նկատէ մեր
հաճոյքներն, կապուտաջիլ մանիշակներ մեզ իրր
խշտեակք՝ չեն կրնար թոխթոխել և ոչ իսկ վերա-
հասու լինել բրածներնուս։

«Դարուն խանդակաթ որ քո անընդիմակ շըր-
թանց վրայ կ'երեւի, կ'խնացնէ թէ չես հասուն
դեռ, բայց կատարեալ ճաշակուելու համար, 'ի
գործ դի՛ր ժամանակն, մի՛ թողուր սահիլ յաջող
առիթն. դեղեցկութիւն ինք իւր վրայ վատնուե-
լու համար չէ ստեղծուած. գողարիկ ծաղկունք
յերախայրիս որ անքաղ մնան կը փտին և կ'անհե-
տանան խուն ինչ յետոյ։

«Եթէ դիմաք էի ոգեղ, գարշատեսիլ, խոր-
շոմեալ 'ի ծերութենէ, չարահոգի, կեղծ, անշնորհ,
կերկերաձայն, զառամեալ, անարդեալ, յօդա-
ցաւոտ և ցուրտ, նեամերես, չորացեալ, վատոյժ,
հիւթասպառ, կրնայիր արդարեւ տատամսիլ,
զի յայնժամ չէի ես ծնած քեզ համար։ Իսկ մինչ
զերծ ամեն թերութիւններէ, ընդէ՞ր այսպէս
գարշիս յինէն։

«Զէ՛ մարթ նշմարել ոչ մի խորշոմ ճակտիս վրայ.
ականջիքս գորշագոյն, վառվուռն և մտա-
զուարճ, զերդ գարուն կը նորոգի իմ գեղ դիմաց
մէն մի ամ, վարիկամերթ եմ յոյժ և գիրուկ,
ուղեղս եռանդոտ, գիրդ ձեռնս տամուկ, որ
եթէ դու քոյովդ սեղմէիր զայն իսկոյն պիտի
լուծեալ հալէիր յայն կորով։

«Հրամայէ՛ ինձ խօսիլ, պիտի դիւթուին ականջդ
կամ իբրեւ կախարդուհի ոք պիտի սահիմ բուսոց
'ի ծայրս, կամ հանգոյն յաւերժահարսին հերար-

ճակ պիտի պարեմ յաւազուն առանց հետք մը իսկ անդ թողլոյ. սէրն մի ոգի է հրախառն, իւր բնութիւն զերծ 'ի բրտութենէ՝ չկարէ սակայն խոնարհիլ, բայց որչափ թեթեւաշարժ և է ոքնի 'ի վեր ելանել։

«Նկատէ դամ մի զայս դարնանաւէտ նստարան ուր հանդչիմ ես, այս անժոյժ ծաղկունք զիս կը վերցնեն հաստաբերձ ծառոց նման երկու նրբերան աղաւնեակներ սկսեալ յառաւօտայն մինչեւ գիշեր կը տարուբերեն զիս յերկինս ուր որ կամիմ զբօսնուլ, ինչպէս ուրեմն, քաղցր մանուկ, թեթեւասլաց սէրն 'ի քեզ ծանր յոյժ թուի։

«Ինչ սիրտ արդեօք պիտի սիրէ՞ր դէմքդ, աչ ձեռնդ ձախն բռնելով պիտի կրնա՞ր անդ սեղմել սէրն. ըրէ դու քեզ ոչ ոք քծինք, մերժէ դու քեզ, յափշտակէ քո աղատութիւն և տրտնջէ դողութեան դէմ. այսպէս Նարկիս լքաւ զիւր անձն և մեռաւ իւր ստուերն գրկելուն համար վազած միջոցին։

«Ձահք լուսաւորելու համար են, գոհարներ գործածելու, համադամք ճաշակելու, նորափթիթ և դեռահաս գեղեցկութիւն վայելելու համար, դալարիք պարտին ծաւալել իւրեանց բուրումն, և ծառք բերրի տալ պտուղս. ամեն ինչ որ իւր համար միայն կ'ապրի՝ անգութ կը գտնուի առ իւր բնութիւն. սերմն 'ի սերմանց ելանէ, 'ի գեղոյ

բղխի գեղեցկութիւն, ծնար դու, ծնուցանել քո պարտք են։

«Զմէ՞ կը անանիս դու երկրիս արդասեօք, մինչ չկամիս քո արդասեօք զերկիր սնուցանել, բնութեան օրինօք կաս դու ծնանիլ, որպէս զի քուկիններ կարեն ապրիլ քո մահուանէ վերջ, և հակառակ մահուն պիտի ապրիս դու դեռ ընդ կենդանի նմանութեամբդ զոր պիտի թողուս զկնի քո։»

Այս խօսքերէ վերջ, սիրոյ դէմոյն զգաց զիրանն 'ի քիրան թաթաւեալ, զի ստուերն աներեւութացեր էր անկէց ուր պառկած էին իրենք, և Տիտան կէս օրի ջերմութենէ ուժաթափ կը նկատէր զանոնք կրակացայտ բոցերով, հրաշէկ աչօք, մաղթելով որ Ադոնիս վարէր զիւր կաւքն, ինք փոխանակ նորա Աստղիկն մօտ լինէր։

Յայնժամ Ադոնիս անվոյթ շարժմամբ մի, ճանճրացած հայեցուածով, և տհաճութեամբ մթնցած, պառտեալ յօնքերու ներքեւ սքողած ականողիքն, նման երկնից արատաւորեալ խոնաւուտ շողիներէ, խեղաթիւրէ զերեսն արհամարհանօք և կը գոչէ. «Օ՜ն տրդ, բաւէ սէրդ, արեգակն կ'այրէ դէմքս, թող որ հեռանամ։»

«Աւա՜ղ, կը պատասխանէ Աստղիկ, պատանի դեռ, այնչափ նուազ դիտոտ։ Ի՞նչ չար և անոտի պատճառ կուտաս մեկնելու համար։ Ահա ծծեմ մի

ջունչ երկնային՝ որոյ սիւդ քաղցրաբոյր պիտի զովացնէ արեւու ջերմութիւն իւր այս կիսաբոլոր շրջանին մէջ. քեզ հովանի պիտի հայթայթեմ հերովքս, եթէ հերքս և կիզուն՝ կը զովացնեմ արտասուօքս։

«Ակն արեւու որ յերկնից բարձանց կը ջահավառի՝ իւր բոլորք ճառագայթներն կարձակէ մեզ միայն, և ահա ես արեւուն ու քո միջեւ կը գտնուիմ։ Իմ այնկէց ստացած ջերմութիւն նուազ տաժանելի է, այլ քո աչաց հրացայտ բոցն միայն կ'այրէ զիս, եթէ անմահ չլինէի, իմ կեանք վաղ իսկ զիւր վերջ գտած էր, զետեղուած այսպէս երկնից ու երկրի արեգականց միջեւ։

«Անողո՞ք ես ուրեմն, վէ՞մ ես կարծր զերդ պողովատ։ Այո՛, քան զխիճն ես առաւել, զի վէմ չընդդիմակէ յար տեղատարափ անձրեւաց։ Կնոջ մի զաւակ ես, սակայն չգդաս թէ ի՞նչ է սիրելն, քանի՛ դառնաղէտ սիրոյ բացակայութիւն. առ ի՞նչ մայրդ չեղեւ սիրտ սալացեալ, չիպիտի ծնէր զքեզ, այլ պիտի մեռնէր առանց զդորովն ճանչելոյ։

«Ի՞նչ եմ ես որ դու այդպէս կարհամարես զիս, կամ ո՞ր վտանգ իմ սիրոյ հետ զուգընթանայ։ Մինթէ շրթունքդ մի խեղճ համբուրիւ գեչասցի՞ն առաւել, խօսէ՛, գեղեցիկ բարեկամ, բայց ազնիկ բառեր արտասանէ միայն, թէ ոչ լուռ կեցիր,

տուր ինձ համբոյր մի, քեզ պիտի դարձնեմ զայն, եթէ կամիս որ կրկնուի մի եւեւ պիտի տամ քեզ 'ի շահ։

«Օն անդր, նկար անկենդան, վէմ ցուրտ ու անզգայ, դրօշ գեղանկար, պատկեր խուլ և մեռեալ, արձան որոյ աչք միայն գոհացնեն լինել նման մարդոյ՝ բայց ոչ ծնեալ 'ի կնոջէ, թէ նմանութիւն բերես մարդոյ այլ չես մարդ, զի մարդիկք տան համբոյր իւրեանց շարժմամբք իսկ»։

Զայս ըսաւ, անհամբերութիւն կը հեղձուցանէ իւր թախանձալիր ձայն, և տենչանաց շտապութիւն մի բոսպէ հանգիստ կը խնդրէ, բոսորավառ իւր այտեր և ջահալոյծ աչկունք նախատինքն իւրեանց բոցերու մէջ կը կարդան, այլ դատաւորն սիրապաշար անկարող է զարդարութիւն մերկանալ, այժմ կուլայ, այժմ կուզէր խօսիլ, այլ հեծեծանք արգելք կը լինին խորհրդոց։

Կը թօթափէ մերթ զգլուխն, ապա նորա ձեռքէն կը բռնէ, երբեմն անոր կը նայի ակնթարթ, և մերթ յերկիր. կուզէ զաչս սլչուցեալ, երբեմն թեւօքն իրր գօտի զնա կը բոլորէ, կը կամի շղթայակապել իւր թեւոց մէջ, բայց Ադոնիս կը մերժէ, և երբ իսկ մրցի նորա հետ խոյս տալու այնկէց, դիցուհին շուշանափայլ մատամբքն փակեալ կը սեղմէ ուժգին։

«Սիրելիդ, կ'ըսէ, որովհետեւ զքեզ փղոսկրեվայլ պատնեշապատ ցանկի մէջ կալեալ բռնեցի, կ'ուզեմ լինել մի փարախ, և դու իմ այծեամ, որածէ ուր որ կամիս, լերան վրայ կամ 'ի դաշտն. ճարակէ 'ի շրթունս եթէ ցամքած են բլուրքս, գնա թափառել աւելի վար, անդ ուր են աղբերք սիրաբուղխ։

«Այս սահմանայ մէջ բարի իրաց կայ ճոխութիւն. հովիտ դալարագեղ, դաշտ հեշտավայր, բլրակք գեռաբողոր, մացառս մեւայլ ու թանձրախիտ մրրիկներէ և յանձրեւաց զքեզ պատսպարելու. իմ այծեամ լե՛ր ուրեմն, զի այնպիսի փարախ մ'եմ մինչ ես, ոչ մի բարակ (որսորդ շուն) զքեզ պիտի հալածէ, եթէ հաղարն միահաղոյն իսկ հաջեն։

Այս խօսքերուս վրայ, Աղոնիս կը ժպտի անարգալից քմծիծաղով մի, որ այտից վրայ կ'երեւի ազնիւընտիր մի խորշ. սէրն է որ պեղեց զայս խորշ, որպէս զի եթէ հասնի սիրոյն օրհասն, կարենայ թաղուիլ նման մի այնքան պարզ տասպանի մէջ, և սէրն արդէն իսկ կը գուշակէր որ թէ գայր յայլ վայր մնալ, չէր կրնար մեռնիլ անդ ուսկից սէր կառնու ծնունդ։

Այս սիրասնունդ անձաւք, բոլորաձեւ և կախարդիչ ջրհորք բացին բերաններն զԱստղիկ կլանելու համար. դիցանոյշն պանդոյր մ'էր դարձած, ի՛նչ պիտի լինի արդ իւր բանականութիւն։ Արդէն անկեալ 'ի մահ՝ զի՞ պէտք իցէ միւս հարուածմի ևս տալ նմա։ Զուարդ դշխոյդ սիրոյ, 'ի քոյդ արքայութիւն ևեթ էքեալ, սիրել այս մը որ հեգնութեամբ կը ժպտի քո վրայ։

Արդ՝ յո՞ր կոյս դառնայ հէքն, զի՛նչ ըսէ։ Իւր բառերու պաշարն հատաւ ապաքէն, և իւր վիշտք միայն յաւելուն յար, ժամանակն սահեցաւ, իւր տենչանաց առարկայն ահա արդէն կը հեռանայ։ Պատանին կը ջանայ ճողոպրիլ նորա 'ի ձեռաց. «խնայէ՛, կ'աղաղակէ, մի փոքրիկ շնորհ, քիչ մի կարեկցութիւն» բայց նա ընդ յառաջ պացեալ կ'երթայ իւր նժոյգին մօտ։

Բայց տեսէք դամ մի, քիչ հեռուն, մի մատակ նորատի, կատաղի և վսեմ կը տեսնէ զնժոյգն Աղոնիսի որ դռստեալ դափր հատանէր։ Ճախր առեալ կը վազէ մատակն, ձգեալ ընդ ունդունս խրխնջէ մեծաձայն. նժոյգն ահեղավիզ, կը կոտորէ սանձն ու շրուշակն որով ծառի մը ճիւղի կապուած էր, կը խոյանայ վազվազելով առ մատակն։

Սիգաձեւ ճախրելով և վրնջելով շուրջ կը կայտառէ և կը կարէ 'ի միջոյ հիւսկէնաշէն փոկն. կարծրեղունդ թաթօք պատառէ զերկիր և որոյ կուրծն անձաւակերպ կը հնչէ երկնորոտ ամպոյ նման. ատամանց ներքեւ կոտորելով երկաթեայ սանձն, այսպէս տիրէ նմա որ իւրեան տիրէր։

227-2015
(6882-57)

Ականջքն կանգնին 'ի կայուելն, դիզեալ խոզանան բաշքն գեղածուի որ ծածանէին 'ի կոր վիզն, կ'ըմպէ զոդ ունգամբ, զինչ հնոց որ 'ի դուրս կը շնչէ շոգի թանձրածուխ, իւր մեծավայլ և հրավառ աչքերն քաջեռանդն խանդի և ամենաղօր ըղձի են գուշակ։

Մերթ դոփեալ կընթանայ յամրաքայլ, սիրանաղ և կոկողավիզ համեստութեամբ, ապա 'ի վեր վազեալ կը կանգնի և կորացեալ կը խոյանայ, իբր կամէր ըսել· տեսէք, ոյժս կը փորձեմ, և ինչ որ կընեմ՝ ինձ մօտ կեցող մատակի աչքն հրապուրելու համար է։

Ի՞նչ փոյթ և հոգ տիրոջ սրտմտեալ շարժումներն, նորա շողքորթ «հօլաներն» և կամ «կեցիր կըսեմներն», կը նեղե՞ն միթէ զինք սոյն բոսկէս շրուշակ, խայթիչ խթան, սթար մեծագին և գեղազուարթ պաճուճանք· իւր սիրոյ առարկայն միայն կը տեսնէ և ոչ այլ ինչ, և ոչինչ են համրուն այլ ամենն վսեմախանդ և փայլատակող յաչս իւր։

Երբ մի նկարիչ ջանայ դերազանցել կեանքն ուրուագրելով երիվար մի վայելչագեղ կատարելութեամբ, իւր արուեստ կը մրցի բնութեան ձեռագործի հետ, ինչպէս մեռեալն քան զապրողն դերագոյն կարէր լինիլ, նոյնպէս սոյն նժոյգն զերդ երիվարն նկարչին կ'անցանէ զամեն ձիս

ձեւով, քաջութեամբ, գունով, կազմով և ընթացիւք։

Եղունգ բոլորաձեւ, յօդք ամիսի, պագք երկայն և թաւամազ, ընչ լայնալիր, մեծակն, գլուխ փոքրիկ, ունգունս բաց, բարձրավիզ, ականջներն կարճ, բարձունք ուղղաձիգ, կորով արտասովոր, բաշք թանձրածուխ, ագի խիտ, դամակ լայն, մատաղամորթ, իրբ ամենակատարեալ ձի ոչ ինչ կը պակսի անոր վրայ, բաց 'ի քաջակորով հեծեալէ մը զոր ամրապինդ սանձք կը խնդրեն։

Մերթ 'ի հեռուն կը խաղայ խայտայ երագ, ապա յանկարծ կը կանգնի անշարժ, մերթ փետրոյ մը շարժման վրայ՝ ահա կը թռչի, կարծես ընթացող հովն 'ի մրցում կը գոչէ, կը վազէ՝ թէ կը խոյանայ, ոչ ոք կարող է ըսել, զի հողմն գեղածածան բաշից և ագւոյն մէջ շնչելով կը բարձրացնէ զհերս զինչ փետուր։

Կը նայի իւր տենչացած մատակի վրայ, և կը վրնջէ երեսին, մատակն կը պատասխանէ նմա կարծես գիտնալով զոր ինչ նա յայտ կ'առնէ· վսեմ, կանայց նման, տեսնելով որ իրեն կը քծնի, անտարբերութիւն կատանձնէ, ընդդիմակ կ'երեւի, հակառակ իւր սիրոյն կիցս կ'արձակէ, և անարգելով կիզիչ խանդն կը մերժէ աքայեօքն նորա հեշտ դրկումներն։

Յայնժամ մելամաղձիկ դժգոհութեամբ վար կառնու պոչն, որ ղերդ ծածանող դարգմանակ, հովանի կուտայր շոգեծուխ երանքներուն դավը հատեալ ուժգին, խեղդամահ կ'ընէ խեղճ ճանճերն 'ի ունդաց փչած շոգիի մէջ։ Իսկ սիրատարփ մատակն տեսնելով նժոյգի այդ ասպիճան զակատելն, առաւել մեղմ կ'երեւի, և ցասոյթն արդէն յագեցած էր։

Իւր տէրն անհամբեր կերթայ զայն բռնել, բայց ահա մատակն առանց հեծելոյն, երկիւղալից և նուազ վարաքող բռնուելոյ, կը վազէ խոյս տալով արագ արագ նորա մերձենալուն, և բերելով 'ի հետուստ զնժոյգն զոր Ադոնիս անդ կը թողու։ Կը վարդեն յիմար սրընթացիւք ծածկուիլ անտառի խորը, ետեւ թողլով զադուաներն՝ որք կը ջրդին անցնիլ զանոնք իրենց թեթեւամտիչ թեւերով։

Ադոնիս ոգեսպառ զհետ նորա սնդելէ, կը նստի գետին անիծելով իւր անհնազանդ և ժըպիրհ կենդանին. ահա վազ ընդ փոյթ վերստին կերեւի ըղձատենչ ապիկար սիրոյ համար բարեբաստ առիթն անդրէն սկսելու իւր աղերսանք, զի սիրահարք կրսեն որ սիրտ մի եռապատիկ անարդարութեամբ կը վտանի եթէ տրդիկն նմա լեզուի օգնութիւնն։

Մի փակեալ բուռ եւս քան զեւս սատիկ կը տաքցնէ, մի ընթացարգել գետ՝ յոյժ մեծ կա-

տաղութեամբ կը յորդէ. նոյնն կրնայ ըսուիլ թագուն ցաւի մը համար, բանից ազատ չունչն կը մեղմէ սիրոյ հուրը, մինչ սրտի ջատագով դամ մի համբէ, յամախորդն կը մեռնի յուսակտուր իւր դատէն։

Այն ինչ Ադոնիս աստուածուհւոյն գալը կը տեսնէ, կ'սկսի շառագունիլ, հանդոյն հրաշէջ ածխոյն զոր կ'արծարծէ կրակն, և կը ծածկէ ընդ կոակաւն դրդռեալ յօնքերն, հոգին խըռովեալ կը տանի զաչերն յերկիր անթափանց, առանց իսկ նշմարելոյ թէ Աստղիկ իւր մօտն էր, զի աչքն հազիւ նմա ուշադրութիւն կը դարձնէ։

Ո՜հ ինչ տեսարան, քանի՜ զարմանալի է տեսնել զնա որ թագծեալ պատանւոյն քով սողսկելով կը մերձենայր, դիտել իւր դէմքի գունաց պատերազմն, նշմարել թէ ո՞րպէս բոսորագոյնն և սպիտակն կը ջախջախեն զմիմեանս, վայրկի մի յառաջ իւր դոյն էր դալուկ, իսկ այժմ հուր կը ցայտէ յերեսացն, որպէս չանթէ փայլատակեալ յերկինս։

Նոյն վայրկենին որ կը նստի, ահա դիցանոյշն նորա առջեւ ծնկի եկած, խոնարհագոյնն քան զամեն սիրուհիս, գեղաթափ միով ձեռամբ վեր կ'ամբառնայ նորա բեղոյրն, և միւս նարմանազուկ ձեռամբ կը շոյէ գիրդ գերեսն, և որ յոյժ առաւել փափուկ երեսի վրայ կերեւի այն դիրդ ձե-

ուին հետքն այնչափ դիւրաու՝ ինչպէս մէն մի նը-
չան նորատեղաց ձեան վերայ։

Ո՛հ ինչ մարտ հայեցուածոց կը փոխանակի ի-
բար մէջ. ականողիք դիցուհւոյն, աղերսային,
թախանձողք, կը խնդրեն Ադոնիսի զաչերն, Ա-
դոնիսի աչկունք կը նային յաչս գեղուհւոյն՝ իբր
թէ յայնս նշմարած չլինէին մեկնութիւնը, աստ-
ուածուհւոյն լուսալիճք չեն դադրիր քծնիլ առ
նա յարգանօք, իսկ Ադոնիս ինքն կարհամարէ զայս
պատիւ, և այս համբակաղ դարձուած կը գըտ-
նայ զիւր պայծառ բացատրութիւն արտասուաց
մէջ որ նման եղերերդակ պարու Աստղիկն աչեր
կուտան հոսել։

Աղնուաշարժ վայելչութեամբ դիցանոյշն նորա
ձեռքն կը սեղմէ, շուշան արգիլեալ 'ի բանտ
ձիւնապատ, փղոսկր փակեալ 'ի լար ալասատ-
րեայ. մի այսպէս սպիտակափայլ բարեկամ պա-
ռունակող մի այնքան լուսափայլ թշնամի, այս
հիասքանչ մարտ, մին յարձակող միւսն դիմադ-
րող, կը հանդիսացնէր երկու արծաթափայլ ա-
ղաւնեաց տեսարանն ոյք կը կռուին կոցաւ։

Դամ մի և այս սիրատարի զակատում որ կը յուզէ
իւր խորհուրդները, կուտայ նմա բանից թեն.
«ո՛վ գեղեցկադոյնդ արանց որ չարժին յայս գունա
մահկանացու, ինչո՞ւ չես ինչ որ եմ ես, և ես ընդ-
էմ՞ը չիցեմ մի այր ոք, է՞ր իմ սիրտ ևս չէ ան-

գծելի քոյդ նման, և քո սիրտ վիրաւոր հանգոյն
իմոյս, մի քաղցր հայեցուածոյդ համար քո բժըշ-
կութիւն քեզ կ'ապահովէի՝ մինչ երբ զքեզ բու-
ժելոյ չլինի այլ ինչ պէտ քան զհամայն մարմնոյս
թարշամելն»։

«Տո՛ւր ինձ ձեռքս, կ'ըսէ Ադոնիս, ինչո՞ւ կը
սեղմես» — «Տո՛ւր ինձ սիրտս, կ'ըսէ աստուա-
ծուհին, կը թողուս ձեռքդ, ո՛հ տո՛ւր զայն ինձ,
կ'երկնչիմ զի մի՛ կարծր սիրտդ զայն յերկաթ
փոխէ, եթէ անգամ մը որ յերկաթ փոխուի,
քաղցր հառաչք չեն կարեր այլ ևս գծել զայդ.
յայնժամ անզգայ պիտի դառնամ սիրոյ խոր հե-
ծեծանաց, քանզի Ադոնիսի սիրտն զիս կարծրա-
ցուցած կը լինի»։

«Պատկառէ՛, կ'աղաղակէ, թո՛ղ ձեռքս, և թող
զիս որ գնամ, կորուսի այս աւուր զրօսանքս,
նժոյգս փախաւ, եւ իմ զրկուելուն յանցանքն
քուկդ է։ Կ'աղաչեմ, գնացէք այսկէ և զիս միակ
թողէք աստ, որովհետեւ բոլոր հոգիս, մտածու-
թիւնս և բոլոր իմ անհանգիստ փոյթ և հոգն է
գիտնալ թէ ինչպէս զիմ երիվար պիտի կարենամ
բաժնել այդ մատակէն»։

«Այսպէս պատասխան կուտայ Աստղիկ, քո
երիվար, ինչպէս բնական է, կղգայ երախտեօք
ջերմ մերձաւորութիւն քաղցր ըղձի. սէրն մի ա-
ծուխ է՝ որ հարկ է պաղիլ, թէ ոչ սիրտն 'ի հուր

դարձնէ. ծովն ունի սահման, այլ իրմն խորա-
տակ և ոչ մի, զարմանալի չէ ուրեմն որ նժոյգդ
վախած լինի։

«Անդ իբր պարզ կենդանի կապուած կար ծա-
ռի մը, խոնարհարար հնազանդած մի կաշեայ ե-
րասանակի, իսկ երբ զցանկալին մատակ տեսաւ,
իւր նորատեայ գերասքանչ իրաւունքն, քամահ-
րեց զայս վատթար գերութիւն, մէկ կողմ նետեց
վիզն կորացնող անարդ խրատն և ազատեց բե-
բանն, քամակն ու կուրծքն։

Սիրահա՛ր է նա, յետ այր ակն ոսկորաժէտ կա-
տարելապէս վայելէ իւր հոլանի տիրուհւոյն տե-
սիլն անկողնոյն մէջ, քան զաւանն ապիտակ մար-
մին ձիւնափայլ և պաղպաջուն, որոյ աչացն հա-
ւասար ոչ մի զգայարանք չեն անձկայր գոհանա-
լու։ Ո՞ր ապուշ և երկչոտն չժտի մերձենալ հրոյն
երբ ցուրտ է օդն։

«Ներէ՛ ինձ, ազնիւ պատանիդ, արդարացնել
նժոյգդ, և ասի՛ր 'ի նմանէ, կաղաչեմ քեզ հոգ-
ւոյս խորէն, վայելել զամն ուրախութիւն որք
դան յանդիման, եթէ անխօս ու համր լինէի,
իւր ընթացք պիտի շատանային քեզ զայն ուսու-
ցանելու. ո՜հ, սովրէ սիրելն, դիւրին է յոյժ
դասն, եթէ դամ մի ուսար, այլ ևս չէ մարթ
մոռնալ զայն»։

«Զեմ ճանչեր ես սէրն, կը պատասխանէ, և չեմ
ուզեր ճանչնալ, մինչ սէրն չէ մի վարդ՝ զոր կա-
բենամ որսալ։ Ծանր է փոխ առնուլ և չկամիմ
երբէք զայն պարտիլ։ Սիրոյ համար ունեցած
սէրս, զայն նախատելու համար սիրել է, քանզի
յսեցի թէ այս կեանք մ'է 'ի ծոց մահու, կեանք
մը որ կը ժպտի, կ'արտասուէ և այս ամեն այն
անպօր չնչի մէջ։

«Ո՞վ հանդերձն չաւարտած և 'ի նա ձեւ չգը-
բուած կ'առնու զգենուլ, ո՞վ կը կրէ բոզբոջն
մինչ այր վրայ չերեւիր փթթեալ գեռ ոչ մի տե-
սիլ։ Եթէ բան մը իւր ամման մէջ նուազի՝ ամե-
նափոքրիկ շիւղն իսկ իւր գարնան միջոցի խամ-
բեալ կը թարշամի և առ ոչինչ կը ծառայէ. երբ
'ի նիւս մատակխապին կը հեծնեն իւր նորա-
տուութեան և կրել կուտան ծանր ինչ բեռ, կը
կորսուի նորա պերճութիւն և չդառնայ բնաւ
հուժկու և զօրաւոր։

«Կը վիրաւորէք սեղմելով ուժգին ձեռքս, բաժ-
նուիմք, և մէկդի թողուցք այս մեղկ հրահանգ,
այս ունայն խօսակցութիւն. հեռացուր պաշա-
ռումդ 'ի սրտէս՝ այր սիրոս տեղի չի պիտի տայ,
չի պիտի բանայ զիւր դուռն սիրոյ աղմկաց։ Ար-
ձակեցէք ձեր ըղձեր, կեղծապատիր արտասուքդ,
աղու փաղաքշանքդ, զի երբ սիրտ մի ուժով և
պինդ է, այս ամեն այլ չկարեն համբուն զայն
գծել»։

«Ի՞նչ, դու կրնաս խօսիլ, կ'ըսէ գեղուհին, լեզու ունի՞ս դու։ Ո՜հ կ'ուզէի որ այդիկ զուրկ լինէիր, և կամ ես լսելիքներէ։ Հոգեզմայլ ձայնդ զինչ գուսան սիրագեղգեղ կրկնեց զիմ վիշտ, իմ բեռն շատ էր ապաքէն, իսկ այս յաւելում անտանելի կ'ընէ զայն։ Անդաշնակութիւն մելամաղձիկ, երկնաձայն հնչիւն դաժան, նուագ լսելեաց այնքան քաղցր, խորամուղ վերք սրտի։

«Եթէ աչազուրկ լինէի և միայն ականջ ունենայի, լսելիքս պիտի սիրէին զայս անհուն և անբու

Ադոնիս բոլորովին շուարած և մոայոյզ կը թողու իւր առաջին որոշումի, քանզի կը խորհէր կըշտամբել զինք քաջարար, զոր ինչ նենդամիտ սէրն ազդուսալէս կանխած էր. պատիւ այն մոաց որ կարողացաւ յաջողապէս զայն պաշտպանել, զի երկրատարած կար գետինն մարդաց վրայ, մեռած մարդու մը պէս, մինչեւ որ Ադոնիսի շունչն նմա կեանք տայ։

Փիթն կը սեղմէ, կը զարնէ երեսին, մատներն կը ծռէ, բաղկերակն ասպա կը սեղմէ, կը տաքցնէ շրթներն. բիւր միջոց կ'ուզէ գտնել կարկատելու այն չարիքն որոյ պատճառն եղաւ իւր միակ անզգայութիւն. դիրկն կ'առնու, այլ դիցանոյշն սիրայորդոր կ'որոշէ չզարթնուլ որպէս զի նա գրկէ դեռ զինք։

Գիշերն վշտաց վոխեցաւ այժմ վաղորդայնի. անժոյժ կը բանայ յուշիկ իւր խաժակ աչացն լուսամուտք, որպէս արեգակն գեղադէմ լուսավինջիկ նորածին պայծառութեամբ զարթուցանէ զառաւօտն և տայ ոգի հանուր տիեզերաց, և ինչպէս դարձեալ ընու վառօք զերկին ոսկեվառ արեւն, այսպէս իւր դէմք նշողեալ վառի գիցուհւոյն յաչաց,

Ոյր ճառագայթս անշարժ ու անյողդողդ կան Ադոնիսի պաղպաջուն երեսաց վերայ, այն թէ այնկից առնուին իւրեանց համայն պայծառութիւն։ Երբէք նմանօրինակ չորս ջահք միմեանց չէին հանդիպեր, եթէ փոյթեռանդն մտահոգութիւն չէր մթագնած Ադոնիսի ջահերն, այլ Աստղկան ականողիքն որ տային անցանել լուսոյ նշոյն բիւրեղափայլ արտասուաց մէջէն՝ կը շողշողէին որպէս լուսին գիշերայն կ'երեւի ջրոյն մէջ։

«Ո՞ւր եմ, կըսէ գիցանոյշն, յերկի՞նս, յերկի՞ր, կամ 'ի հո՞ւր, կամ 'ի խո՞ր Ովկիանու։ Քանի՞ է ժամն։ Առաւօ՞տ թէ երեկոյ է լուսահատ։ կը բաղձա՞մ մեռնիլ, թէ ապրի՞լ կը ցանկամ։ Սակաւիկ մ'առաջ կ'ապրէի, և կեանքն մահու վիշտն ունէր, վայրիկ մը յառաջ կը մեռնէի, և մի քերկրալիր ցնծութիւն էր։

«Ո՛ դու կ'սպաննէիր զիս, սպաննէ դամ մի և ևս։ Քո սիրտ սալացեալ, ուսուցիչ դիւրավարժ, յաջողեցաւ տալ աչացդ այնպիսի չարահնար երեւոյթ քամահրանաց, մի անարդանք, ոյք հարբատահարեցին չուառ սիրտ և ականողիքս, հաւատարիմ կարապետներ իւրեանց դէմոյն, չի պիտի կրնային տեսնել այլ ևս լոյս առանց չարթանցդ գթոտ կարեկցութեան։

«Ոհ, տայր թէ մին զմիւսն համբուրէր ընդ երկար 'ի վարձ սոյն բուժման։ Ոհ Զթառատէր բնաւ չարթանցդ չիկորակդոյն, և անանց մնայր նոցա թարմութիւն վանելու համար բոթալից ամաց ղժահ դարշահոտ, և աստղահմայք ասէին, յետ

մահու մարդարէութիւն արտասանելոյ, թէ չունչդ հալածեց զժանտախտ։

Շրթունք նրբալար և անբիծ, կնիք հեշտաբոյր դրոշմեալ թուլամորթ շրթանցս վերայ, ի՞նչ սակարկութիւն կրնայի ընել քեզ հետ զայնս դեռ ևս անդ դրոշմել տալու համար. վաճառել զանձն իմ, յօժար և յորդոր եմ յայդմ, բաւական է որ կամիս գնել զիս, ինձ համար վճարել, և լաւ մը գործածել զքո վաճառ. եթէ հաճիս արկանել զայս սակ, նախատանաց ահիւ դրոշմէ քո կնիք իմ վարդագոյն շրթանց մամի վրայ։

«Հազար համբոյրի համար կրնաս գնել զիմ սիրտ, և պարապոյ ժամուդ վճարէ մի առ մի։ Ի՞նչ են քեզ համար տասն անգամ հարիւր համբոյր, թուելոյս չափ շուտով չէ՛ կարելի հատուցանել։ Ենթադրենք թէ քո պարտք չվճարելով կրկնապատկի, քսան անգամ հարիւր համբոյր դժուարին և ահագին գո՞րծ մի է»։

«Դշխոյդ դեղադէմ, կ'ըսէ Ադոնիս, եթէ ունիք ինձ համար մի մեծ սէր, 'ի հաշիւ առէք զիմ երկչոտութիւն տոցս դալարութենէ, մի՛ ջանաք նախ քան զիս ճանաչել զանձս. չկայ որսող որ անխնայ լինի մանր ձկանց համար. հասուն սալորն կկնայ դեռին, իսկ կանաչ սալորն յոստն մածեալ կը մնայ կիսով, եթէ զայն կանխահաս քաղեն, դառն է 'ի ճաշակ։

«Տեսէք մխիթարիչն աշխարհի, պարտասեալ յընթացս կուգայ դադրիլ յարեւմտեան կոյս օրական ջերմասիւռ աշխատանքէն. բուռն պատգամ գիշերի իւր ձայն կ'արձակէ արդէն, — ժամանակն ուշ է արդարեւ, խաչինք 'ի փարախ մը-տած են, թռչունք իրենց բոյնը, և ածխաթոյր ամպեր կը մթագնին երկնից երեսն, հարկ է մեզ անջատիլ և մաղթել միմեանց բարի գիշեր։

«Ներեցէք ինձ արդ գիշեր բարի ըսել ձեզ և նոյնչափ ըսէք դուք, եթէ հաւանիք ըսել, մի՛ համբոյր կայ ձեզ։» — «Բարի գիշեր» կըսէ Աստղիկ, և նմա բարեաւ երթ ըսելէ յառաջ՝ բաժանման քաղցր հատուցումն վճարեալէ. գիւղանոյշն կը փարի թեւօքն Ադոնիսի հեշտ սեղմամբ մի, կարծես 'ի մի ձուլեալ, երես երեսի միակցորդ։

Այն ինչ կը բաժնուի վերջապէս և 'ի բաց առեալ զայս երկնածորան նեկտար, գեղաբուստ բերանն, որ հեշտ ախորժակն Աստղիկան ծարաւեալ շրթունք քաջ կը ճանաչէին, ծարաւն անցնելէ յետոյ, կը տրտնջան վերստին պապակելով, երկուքն իսկ գիրկընդխառն կ'լինան գետին, շրթունքներնին միահաղորդ սերտիւ մածուցեալ, Ադոնիս ընկճեալ 'ի բիւրաղեղ դդուանս, աստուածուհին ոսկառեալ 'ի սակաւութեանց նորայն։

Ահա տուփող խանդն վերսկսի որուն լքեալ և թոյլ կը կենայ. դիցուհին կը ճարակէ դդուանօք անյագաբար առանց կշտանալ կարենալոյ, իւր

շրթներ կը տանին յաղթանակն, Ադոնիսի շրթունք հլուծեամբ կը վճարեն այն գինը զոր իրենց բռնաւորն կը խնդրէ և որ անգէղ պահանջն զարժէքն այնչափ կը բարձրացնէ որ Աստղիկ ծախեալ պիտի սպառէր նորա շրթանց փարթամ դանձը։

Այժմ որ զգաց կողոպուտն քաղցրութիւն, կոյր կատաղութիւն կ'ակսի կապտել և աւարել։ բոցն յերեսացն կը ժայթքէ և ծխէ, կեռայ զեռայ արիւնն, և արիվն առանց համբուն ակնածութեան կը զարթուցանէ 'ի նա յուսակորոյս յանդգնութիւն մը, ամենեւին մոռացութեան մատնուած, 'ի տար վանելով իրմէ զուշն, չյիշէ այլ ևս ոչ ամօթոյ անրիծ չիկնութիւն, ոչ սպասուոյ մրրկին։

Ադոնիս տոչորեալ, պարտասեալ, սպառեալ նորա յանողոք գրկածութեանց, հանդոյն վայրի թռչնոյն որ ձեռամբ թակարդեալ կամ երագոտն այծեամի խոնջեալ յետ երկար ատեն հալածուելէ որսողէն, և կամ արտասուող մանկան նման զոր կը քնացնեն որորեալ, կը հպատակի հնազանդութեան այժմ և չընդդիմադրէ այլ ևս մինչեւ որ առնու նա կրցածն, այլ ոչ կամեցածն։

Ո՞ր մեղրամամ այնքան դժուարամեղկ է յետ այնչափ զոյն սեղմեալ ճմլելոյ, և չխմորել մէն մի թեթեւ ճնշմամբ։ Ցոյսէ վեր գտնուող բաներու յանախ երկչոտութեամբ ձեռնհաս կը լինի մարդ, գիտուրասէս սիրոյ՝ ուր յանդգնութիւն զան-

ցանէ ամեն հրաման։ սէրն չնուազիր բնաւ դալկադէմ վատի նման, այլ այնքան կը ճնշէ ժառութեամբ և թախանձանօք զիւր անուշակ և ընտրեալ առարկայն որ այլ ևս չհանդուրժէ դիմադրել։

Եթէ մերժէր դեցուհին երբ նա պատեց յօնքերն, նորա շրթանց վերայ բնաւ չպիտի ծծէր այնպիսի նեկտար։ Նախատալից խօսքերն և սպառնացող դէմքն չեն կարող սիրահարն ընկրկել։ թէպէտ վարդն փշոտէ՝ սակայն դարձեալ կը քաղեն միշտ։ եթէ գեղեցկութիւն փակեալ լինէր սողնակաց ներքեւ, սէրն ևեթ թափանցելով 'ի վերջոյ պիտի խզէր զամենն։

Գուցէ 'ի սիրտ իջեալ հրամայէ չկաշկանդել այլ ևս գեղոյ զաստուածն, հէգ պանդոյրն կ'աղաչէ զինք ազատ թողուլ։ վճռելով չհակառակիլ նմա երկար ատեն ևս, բարեաւ է՛րթ կ'ըսէ և կը յանձնարարէ նմա գութ ունենալ իւր սրտին որ Ադոնիս հետը կը տանի՝ վանելով զայն աստուածուհւոյն կուրծքէն, կ'երդնու յաղեղն Երոսի։

«Պատանիդ քաղցր, կըսէ դեղուհին, դիշերս ինձ համար անվիշտ չի պիտի թաւալի, զի ախտացեալ սիրտս պիտի պահանջէ յաչացս հսկել։ Ըսէ ինձ, պետն սիրոյ, վաղուի օրն պիտի տեսնե՞նք գոնէ զիրար, ըսէ՛ պիտի տեսնուի՞նք, պիտի տեսնուի՞նք, յանձնառու կըլլա՞ս» — «ոչ պատասխան կուտայ նմա։ մոռդիր է վաղն կինջ մի որսալ իւր մի քանի բարեկամաց հետ։

«Կի՞նջ» կաղաղակէ Աստղիկ, և յեղակարծ դալ-կութիւն մը զերդ շղարշ 'ի ծիրանի դոյն ներկեալ կը ցայտէ իւր այտից վերայ· կը դողայ յայս լուր և թեւոցն շղթայն նորա վիզն կը ձգէ· կը ճնշէ զայն, միշտ կախեալ նորա վզէն, վար կ'իյնան, Ադոնիս փորուն վրայ և ինք երեսն 'ի վեր։

Ահա նոյն իսկ սիրոյ յասպարէզն, իւր ախոյեան հեծեալ յինքն առ ջերմ խառնումն· բայց գեղու-հին սին տեսիլի մը միայն կը հանդիպի, թէպէտ Ադոնիս կը հեծնու 'ի նա, այլ կը մերժէ նորա ճախրանք։ Քան զՏանտաղոսի տանջանս է յոռի զիւրն, — գրկել զԷղիսէ և գրկուիլ 'ի հրճուանաց։

Որպէս թռչունք խափուած 'ի պատկերս նկարեալ խաղողներէ որք միայն աչօք կը յագենան և կը ծոմեն կոցաւ, այսպէս և աստուածուհին կը նուազի իւր սխալ հաշւով, իրր հէգ թռչունք պտուղներն անմերձենալի տեսնէին։ Դիցանոյշն բիւր ջանիւք և անդուլ համբուրախառն աղաչանօքն կը կամի արծարծել եռանդ և խանդ ուսկից հեռի է նա։

Սակայն այս ամեն 'ի զուր է, դշխոյդ գեղատեսիլ, այս չիպտի լինի· զարմուհին ամեն կարելի ջանքեր չվեհերեցաւ ընել, իւր փաստաբանութիւն առաւել մեծ պատուոյ արժանիք ունէր· սէրն է նա, կը սիրէ, և սակայն չէ սիրուած։ «Ի բա՞ց օ՛ն, կ'ըսէ, կը խեղդես զիս, թող որ երթամ այսկէց, զիս այսպէս հոս ըմբռնելն խելոց պակասութեան նշան է»։

«Դու դնացած պիտի լինէիր, սիրուն պատանիդ, կը պատասխանէ, եթէ ինձ ըսած չլինէիր թէ կինձ որսալ կուզեմ։ Ո՞հ խոհեմ եղիր, չե՞ս գիտեր թէ որչափ վտանգալից է խոցել գեղարդիդ չեչտ սլաքաւ մի վայրի գազան որ անդուլ կը սիրէ իւր ահեղ ժանիքները և կազմ պատրաստ միշտ մահ տալ անողոք սպանդագործի նման։

«Երիկամանց վրայ ջոկատ մը ունի քստմնագեղ խայթոցներու, սպառնացող միշտ ոսոխին, իւր ցասման ժամուն աչկունքն իրր լուսատնիք կը վառին· ուսկէց որ կ'անցնի ցոկաւն ամենուրեք դերեզմաններ կը փորէ· եթէ դամ մի գրգռի, ամեն ինչ կը ջախջախէ ճանապարհին վերայ, և յոչ յոչ կը պատառէ եթէ ժանեօքն հարկանէ զոք։

«Իւր կորովի կողերն, զինեալ բիրտ մեռաքսեաւ, նիզակիդ 'ի հանդէս են· իւր կարճ և թանձր վիզն յոյժ դժուարաւ կը խոցուի, դամ մի զայրանայ, առիւծին վրայ իսկ կը յարձակի· մացառք փշալից և խտաթուփ թաւուտք կը բաժնուին իրր թէ երկնչէին և նա 'ի միջոյ արագ կը վիժէ։

«Աւա՜ղ, վարազն չտայ համբուն յարդ դիմացդ՝ որոյ սիրոյ ականոցիք իրենց հայեացներու հարկը կը վճարեն, ոչ գիրդ ձեռացդ, ոչ քաղցրարոյր շրթանցդ, և ոչ բիւրեղափայլ աչացդ որ անթերի կատարելութեամբ կ'սքանչացնէ 'ի հիացումն զաշխարհ համօրէն, եթէ երբէք նորա ձեռքը մատնուիս, — տեսիլ զարհուրելի, — կ'ոչնչացնէ զհա-

մայն գեղեցկութիւնդ ինչպէս արմատախիլ կ'ընէ մարդոց տունկերը։

«Ո՜հ թող զայն հանդարտ իւր գարշահոտ որջին մէջ, գեղեցկութիւնն ահռելի գազանաց հետ գործ չունի, մի՛ իւր վտանգալից անցքին մասներ զանձնըդ։ Նոքա որք կը յաջողին թող բարեկամաց խորհրդոց դիմեն, քեզ սուտ խօսած չլինելու համար, երբ դու վարազի անուն տուիր, ահարեկեցայ քո վիճակէն, և սարսուռ մը յիս զգացի բոլոր անդամոքս։

«Զը դիտեցի՞ր զերեսս, չգունատեցա՞ւ, չնչմարեցի՞ր երկիւղի նշաններ՝ որք յաչս սուղեցան, չնուազեցա՞յ թալկացեալ և դեռին չինկա՞յ։ Ի ներքս, կուրծքիս մէջ ուր կը հանդչիս դու, սիրոս լի նախազգացմամբ կը բաբախէ, կը հարկանէ և կը տրոփէ անընդհատ և զինչ դեռնաշարժ զքեզ կուրծքիս վրայ կը բարձրացնէ։

«Զի հոն ուր սիրէ սէրն՝ նենդաժէտ և խռովարար նախանձն կը կենայ հաստատեալ անդ, իբր պահապան սիրոյ, ստապատիր աղուկներ կը յարուցանէ, դաւաճանութիւն կը թելադրէ, և խաղաղասէր ժամուց ճիչ 'ի բերան կը խուսէ «սպանէ՛, սպանէ՛»» վրդովելով զքաղցր սէր նման հողմոյ և երկրի որ մարեն հուրը։

«Այս վիշտն քսու, խազմասէր լրտեսն, որդն անարդ որ կը կրծէ սիրոյ բունը, այս չաղակրատ

պառաւն, ինքնիշխան նախանձն, հաղորդիչ ճշմարիտ և սուտ լրոց, կը հարկանէ սիրտս և կը փըսիրսայ ականջիս, զի եթէ կը սիրեմ զքեզ, պարտիմ երկնչիլ 'ի մահուանէդ։

«Սա առաւել, կը ներկայէ աչացս փրփրերախ վարազի բարկամայթ տեսիլն, որոյ սայրասուր ճիրանաց ներքեւ մի ոք տարածուած է որ քեզ կը նմանի, վերքերէն կերսպարանափոխեալ, և որոյ արիւնն ցայտեալ դեռափթիթ ծաղկանց վերայ կը թարշամեցնէ ցաւով և խոնարհեցնելով գլուխնին։

«Ի՞նչ պիտի ընէի եթէ զքեզ այդ վիճակի մէջ տեսնէի, ես որ միայն սոյն աղէտի երեւակայութեամբ կը դողամ ահիւ, այս միակ մտածութիւն կ'արիւնէ իմ անժոյժ սիրտ, և երկիւղն կ'ըսէ ինձ թէ այս գուշակութիւն մ'է։ կը կանխատեսեմ քո մահ, ո՛վ իմ վիշտ դու կենդանի, եթէ վաղն հանդիպիս վայրի գազանին։

«Սակայն եթէ կ'ուզես անպատճառ որսալ, հետեւէ խորհրդոցս, կրկնէ քո շներն ընդդէմ երկչոտ նապաստակին կամ խարդաւանօք ապրող աղուեսին և կամ այծեամի՝ որ ոչ մի պատահարի կը դիմադրաւէ։ հալածէ զայս երկչոտ անասունները բլրոց վրայ, և տակուն ձիւդ նիւսը ընկերացիր բարակացդ ընթացից։

«Եւ երբ կարճատես նապաստակն խոցոտես, դիտէ թէ ինչպէս հէգ արարածն՝ վտանգէն զեր-

ծելու համար քան զհողմն արագ կը սլանայ, ի՛նչ փութով ասա անդ պիտի վազվազէ, մերթ 'ի միջոյ, մերթ խաչաձեւ վարդելով մշտանորոգ դարձուածիւք։ Անթիւ կաղաղներ ուրկից կ'անցնի նա կարծես լաբիւրինդոսի կը նմանի թշնամիներն մոլորելու համար։

«Երբեմն կ'ընթանայ խառնուիլ խաչանց հօտի մը իւր հետ բերելու խարդախ բարակները հոտառութիւններն չփոթելու համար. և երբեմն գետնափոր ճագարաց որջն կը նետուի, կասեցնելու հալածողաց մեծաձայն հաջիւնը։ Իսկ երբեմն կը թագչի սոծեամներու խմբի մէջ. վտանգն նենգութիւններ հնարել կուտայ, միտքն կ'ընկերանայ երկիւղի։

«Զի իւր յատուկ հոտն անդամ մը խառնուի այլոց հետ, բորբոքեալ շունք որ կը հոտառեն, կը չփոթին և կը վարանին և դուլ կուտան իրենց մեծահաջիւն ազաղակաց, մինչեւ որ յոյժ դժուարաւ վերստին ճանչեն սլաքած հետքն, կ'սկսին դարձեալ հաջիւններն։ Արձագանգք միայն կը պատասխանեն անոնց, այն թէ այլ որս լինէր երկնից մէջ։

«Մինչդեռ յայնժամ հէգ նապաստակն, բաւական հեռի այնկից բլրոյ մը վրայ, ետեւի թաթից ծայրը կեցած ուշադիր ականջօք կ'ունկնդրէ թէ իւր ոսոխք կը հալածե՞ն զինքը դեռ. դարձեալ կը լսէ անոնց պատերազմական գոչիւն պոռչումը,

այն ժամուն կրնան բաղդատել իւր վիշտ մի հոգեվար հիւանդի որ կը լսէ տխրանուագ զանգակին դանդիւնը։

«Պիտի տեսնես այն պահու խեղճ արարածն քրտնաթաթաւ որ անվերջ մանուածապատ շրջանով մը կը դառնայ և կը դառնայ, մեծ անձկութեամբ կը մունչէ, կը կեղեքէ իւր պարտասեալ խոնջած սրունքներ, ամեն ոտուերէ խրտչած կը կենայ, մէն մի ճիչ ուշադրութիւնը կը գրաւէ, զի թշուառութիւն առաթուր եղած է բազմութեան ոտից տակ, և ով որ անդամ մը նետէն կը փռուի, նորա ոչ ոք օգնութեան կը հասնի։

«Հանդարտ կեցիր պառկած և ինձ մոռիկ ըրէ քիչ մը ևս։ Է՜հ ուրեմն մի՛ մոցիր, զի քեզ չպիտի թողում ելլալ. եթէ իմ խորհուրդք բարոյականեն ընութեանս հակառակ, քեզ զզուել տալու համար է կինձ որսալէ, առ այս անոր կը մատեցնեմ զայս, և որ կը յաւելում ենթադրութիւնքս, զի գիտէ սէրն գուշակել զհամայն կորուստ բօթարեր։

«Ո՞ւր էի ես» — «ի՞նչ փոյթ ինձ ուր ըլլայ, կը պատասխանէ Ադոնիս, թող զիս ասէն մեկնիլ, և այս պատմութեանց մի ընտիր հետեւութիւն պիտի լինի. գիշերն 'ի գլուխս կ'ելլէ ահա»։ — «Է՜հ ուրեմն, ի՞նչ կ'ըլլայ ադով» — «բարեկամներս կ'սպասուիմ այժմ, կ'ըսէ, և հիմայ որ մութ է՝ անշուշտ գնալու միջոցս պիտի լինիմ»։ — «Գիշերի մէջ է որ, կ'ըսէ գիցուհին, իղձն առաւել լաւ կը տեսնէ։

«Բայց եթէ իմաս՝ երեւակայէ որ երկիրն սիրահարեալ քայլերուդ մի հարոյր միայն 'ի քէն կորզելու համար է։ Մեծագին որսեր պատուասէր անձինք գող կ'ընեն, այսպէս ահա քո շրթներ 'ի ծուփս և 'ի թախիծս կը մղեն սրբափայլ զԱնահիտն, կ'երկնչի զի մի' գուցէ գալով 'ի քէն հարոյր մի գողնայ, և մեռանելն կ'անարգէ զիւր ըղձերն։

«Այժմ կ'իմանամ խաւարաթոյր գիշերին պատճառն. ամենապարտ Կենդիա կ'ուզէ մթագնել իւր արծաթափայլ երես լուսնի մինչեւ որ խարդախ բնութիւն համոզուի մատնութեան զաստուածային խեցիներն գողնալուն համար յերկնից, յորում ձեւացուց զքեզ հակառակ ամենազօրն Ողիմպեայ ամաչեցնելու համար զարեգակն օրուան մէջ և զԿենդիա 'ի գիշերին։

«Ա. ոչ այս միայն բնութիւն զայրացեալ չփոթեց ճակատագիրներն հակառակել տալու համար բնութեան սակաւադէպ գործն, յաւելեալ կցելու խոթութիւնք գեղեցկութեան, ջինջ կատարելութիւն պիղծ դարձելեաց, և մատնել զինք 'ի ձեռս բռնաւորին անողորմ արկածից և բաղմաթիւ թշուառութեանց։

«Որպէս ջերմն սաստկահաս, հիւանդութիւնք դունատեալ և ուժաթափ, ժանտախտ թունաւորիչ կենաց, ցնորք յիմարական, ցաւ զծոծրակն կրծող, և որոց հարուածք ջեռուցեալ կ'ասպականեն զարիւն։ Անհամութիւն, վերք, վիշտք, յու-

սահատութիւն եղերելի բնութեան մահը երդուան զքեզ այնչափ դեղեցիկ ստեղծելուն համար։

«Սոյն հիւանդութեանց փոքրագոյնն մի բոլէ պայքարի մէջ յաղթահարեալ կ'անհետացնէ գեղեցկութիւնն. զիմաց շնորհ, թարմութիւն արեան, երանգ ծիրանեղոյն, հրապոյր ամենազան, այն ամեն որ զմայլեալ յափշտակէին զանաչառ դիտողն վայր մի յառաջ, այժմ կ'ոչնչանայ, կը տապալի և կը հալի, ինչպէս լերանց ձիւնն կէսօրի ջերմութենէն։

«Ասոր համար միայն հակառակ անպտուղ կուսութեան, վեստանք զուրկ 'ի սիրոյ, կուսանք որք միմեանց կը յարին և կը ցանկան բերել յերկիր չքաւորութիւն արու և էգ զաւակաց, օ՜ն դու շուայլեա 'ի քեզ. ճրագավառ կանթեղն գիշերայն կ'սպառէ իւղն նուիրելու համար սոսկ իւր լոյսն աշխարհի։

«Ի՞նչ է ուրեմն մարմնդ, եթէ ոչ մի գերեզման լափլիզող, ուր թաղեալ կը մնայ այս սերունդ որ 'ի շրջան ամաց անշուշտ քեզ պիտի վիճակի, եթէ զայն 'ի խաւար չթաւալես դու։ Եթէ զայդ դործես, չի պիտի լինիս անբասիր յաչս աշխարհի, զի գեղեցիկ յոյս մը հպարտութեանդ զոհ պիտի տանիս։

«Այսպէս դու զանձդ անձամբդ կը տապալես, մեծ է ոճիրդ քան զքաղաքացւոց ներքին կռիւն,

կամ քան դյուսահատելոց որք ձեռն 'ի գլուխս հարկանեն և կամ մարդասպան հօր որ զզաւակն 'ի կենաց կը զրկէ։ Ժանգն ահեղասպառ կ'անարգէ դանձն ծածկեալ, սակայն ոսկին կիրառութեան մէջ տայ ծնունդ այլ ոսկւոյ»։

«Օ՛ն ուրեմն, կ'ըսէ Ադոնիս, ահա վերատին կ'ընկղմիս անօգուտ ճառաբանութեանցդ մէջ, յուզեալ մեծապէս։ Համբոյր զոր տուի քեզ 'ի զուր քեզ նուիրած եղայ, և 'ի զուր դարձեալ կը մրցիս հոսանքի դէմ։ ահա բացորոշ յայտնեմ քեզ 'ի խաւարադէմ դիշերիս, անուշիկ մեղի ըղձից, թէ քո ճոռոմ բանքդ ևս քան զեւս ատել կուտան ինձ զքեզ։

«Եթէ սէրն փոխ տար քեզ քսան հազար լեզու իսկ, և որոց ամեն մէկն քան զքոյդ սրատաւուչ լինէր, որք զմայլեցուցիչ լինէին մշտայողդողդ դեղատեսիլ կնոջ երգոց նման, դարձեալ անօգուտ, զի սիրադաշնակ նուագաց ձայնն անզօր և անազդու են բնաւ յականջս այժմիկ։ Գիտցիր ուրեմն թէ սիրտս յականջս գինեալ է և կը վանէ մէն մի վանդ ստաղուր ձայնի։

«Երկնչելով զի մի՛ խարեպատիր դաշնակն մուտ գտնէ սրտիս մշտախաղաղ ցանկին մէջ, և որ փոքրիկ սրտիս անդորրն վրդովելով 'ի վերջին ծայր մտնոյ մինչ ննջելոյ խուցն։ Ոչ տիկին, ոչ, սիրտս չկամի հեծել, այլ մենաւանդ կը ննջէ սլինդ, զի միայնակ է և անոք։

«Ի՞նչ կրցաք յանդիման դնել որ չկարողացայ ջրել ու հերքել։ Ճանապարհն որ 'ի վանդ կ'առաջնորդէ՝ քաղցր է։ չեմ անարգեր սէրն, այլ կ'ատեմ քս հնարք կեղծ սիրոյ, որովք 'փարիս օտարին։ Զայս կ'ընէք մի միայն բազմազան տեսակ ցուցնելու համար, ջատագովութիւն նոր օրինակ, երբ միջնամուխ կը լինին խելք վաւաշութեան։

«Զայս մի՛ կոչեր սէր, զի սէրն յերկինս սլացաւ, երբ ըղձախոհութիւն քրոնաթաթաւ աղարտեց զիւր անունն երկրի վրայ։ Անբիծ սիրոյ դիմաց ներքեւ նորափայլ դեղով սնուցեալ, անպատուեց արատաւորելով զայն։ այս հրավառ սիրասլեան խամրեալ կ'սպաննէ զայն իսկոյն, ինչպէս գաւազ տունկեր նորափթիթ տերեւներն։

«Սէրն կը մխիթարէ յետ անձրեւոյն արեգական ճառագայթից նման, սակայն վաւաշութեան արդիւնք կը նմանին մրրկին որ կը յաջորդէ արեւոյն։ Հաճոյարոյր գարունն սիրոյ կը խնամէ ընդմիշտ զիւր թարմութիւն, այլ վաւաշութեան ձրմեռն կը հասնի նոյն իսկ ամրան կիսոյն մէջ։ Ծայրայեղ սէրն չբերէ տաղտուկ, վաւաշութիւն կը մեռնի իրր որկրամոլ։ Սէրն ամենայն ճշմարտութիւն է, վաւաշութիւնն լի ստայոդ պատրանօք։

«Դեռ ևս կրնայի ըսել, այլ չեմ համարձակիր։ մատեանն հին է, ճառախօսն պատանի։ ահա առ այս կ'երթամ հեռանալ զիւրութեամբ։ Դէմքս ամօթապարտ է, սիրտս վշտագնեալ։ Ականջներս

որ քո հեշտասէր խօսքեր լսեցին, կ'այրին այնպիսի նախատինք մը կրելնուն համար»։

Բսաւ և զերծաւ զանձն 'ի քաղցր գրկացն գեղջուհւոյն, որ նարմանաղուկ թեւօքն շղթայած էր սրտին վրայ, և մեծաքայլ կ'ընթանայ դէպ յիւր բնակարան խաւարչուտ անտառին մէջն, թողլով զսիրուհին գետնատարած և 'ի ծուխս խորասուզեալ։ Տեսէք, որպէս երկնից երեսէն կը թաւալի լուսաշող աստղն, այսպէս և ինքն սողսկելով 'ի գիշերին կ'անհետանայ Աստղիկն յաչաց,

Ցաչացն որ անդուլ կը հայի անոր, նման մարդուն 'ի ծովեղրն կը դիտէ իւր բարեկամն որ այն ինչ նստեալ 'ի նաւ կը հեռանայ մինչեւ վայրագ ալեաց մէջ, այց կատարներն կը մրցին ամպոց դէմ, անտեսանելի կը լինի այլ ևս աչաց· այսպէս գիշերն թխաթոյր և անողորմ կ'սքողէ յամպոց ծոցն զառարկայն որով սնանէր իւր տեսութիւն։

Շլոթած՝ ինչպէս մարդ մեծագին գոհար մի ալեաց խորը ձգած ըլլար անզգուշութեամբ, խռոված նման ուղեւորին որ գիշեր ատեն ճանապարհորդութեանը կը մարի իւր ջահը վտանգաւոր անտառի մը մէջ, ոգեսպառ կը մնայ Աստղիկ խաւարին մէջ, իւր ճամբուն վրայ ունեցած դեղավառ լոյսն կորսնցնելէ յետոյ։

Ցայնժամ կը բաղխէ իւր սիրտն որ կը հեծէ այնպէս ուժգին՝ թուի թէ մերձակայ այրեր վրդովեալ և նորա ողբոց կուտան արձագանգ· բուռն տարփանք այսպէս կուտան պատասխան զանխուլ տարփանաց։ «Եղ՛ուկ ինձ», կը գոչէ և յետոյ քըսան անգամ «աւա՜ղ, աւա՜ղ» և քսան դանդիւն կը կրկնեն նմա նոյնչափ անգամ զիւր ձայն։

Իւր եղերերգ անվերջ տեւեց գիշերն ողջոյն, քանզի սիրահարաց ժամերն երկայն են թէպէտ կարճ կը թուին· թէ հաճելի լինին միմեանց, այլք կ'ըսեն, թէ կը հրձուին իրենցինի նման պարագաներու, և նմանօրինակ զուարճութեանց։ Իւրեանց երկարասատում նկարագիրք, յամախ սկըսեալ, չաւարտէր յառաջ քան զմեկնելն վերջին ունկընդրոյն և կամ չունին իսկ վերջ երբէք։

Որովհետեւ ի՞նչ այլ ընկերութիւն ունի որոյ հետ կարենայ գիշերն անցնել, եթէ ոչ զուր արձագանգ, ձայնահան վայրապար, որք բանից երեւոյթն միայն ունին, և հանգոյն դիւնեանց լեղուախօս մանկանց որք մէն մի ձայնի կուտան պատասխան, և կը մեղմեն այսպէս ինքնահամ անձանց կամքը։ Կոյսն կը գոչէ, այսպէս է, ամենն միահաղոյն կը կրկնեն, այսպէս է· եթէ ոչ աղաղակէր, պիտի կրկնէին ոչ իրմէ վերջը։—

Ահա ազնիւ արտոյտն խոնջեալ 'ի հանգստենէ, կ'ելլայ դուրս իւր խոնաւուտ սենեկէն, կը բարձրանայ յերկին և կը զարթուցանէ զառաւօտն։ Արծաթափայլ արշալուսոյն ծոցը կ'երեւի արեգակն սիգապարար և կ'արձակէ յերկիր բոցավառ ակնարկ-

ներ եղեւնեաց և բլրոց գագաթներն յոսկի երանգեալ։

Աստղիկ զայն կը բարեւէ աղնուավայել ողջունիւ, «ո՛վ դու, Աստուածդ գեղափայլ և հայր համայն լուսոյ, որ մէն մի աստղ լուսաշող կարօտ ազգեցիկ ճոխութեանդ քեւ փայլակնացայտ ճառագայթեն, ասա յերկիր կայ մի պատանի թիւեցեալ մօրէ մի, հաճէ՛ նուիրել նմա լոյսդ որպէս այլոց կը նուիրես»։

Ըսաւ և փութաց դէպի անտառն միտենուոյ, զարմանալով որ առաւօտ եղած և ինք դեռ իւր սիրահարէն չունէր լուր։ Ականջ կը դնէ լսելու նորա շանց և փողի ձայնը, և ահա յանկարծ շանց զուարթ հաջիւնն կը լսէ, կը ճեպէ փոյթ ընդ փոյթ ձայնը ելած կողմը։

Եւ քանի կ'ընթանայ մացառներուն մէջէն, ոմանք վիզը կը փաթթուին, ոմանք երեսն կը համբուրեն, այլք սրնգացն կը պլլուին աշխատելով զինք կեցնելու։ Իսկ նա աշխուժիւ կը ճողոպրէ զանձը 'ի գիրկընդխառն համբուրիչ սնուցանող այծեամի նման, և որ ստինքն այտուցեալ կը ցաւին, երագարար կը վազէ թիւեցնել զիւր եղջերուն թագուցեալ թփոց ներքեւ։

Ցեղակարծ շանց սաստիկ հաջելը կը լսէ և կը դողայ սարսռալով, ինչպէս մէկն եթէ ճանապարհի վերայ գտնէ օձ մի 'ի նենգ մանուածս գալարեալ և որ վախէն կ'ահարեկի, այնպէս բարակացն աղմկալի հաջիւնք սարսափեցուցին զդայրանքը, նուազեցուցին զհոգին։

Քանզի կը հասկնայ ինք թէ այս անվտանգ որս մի չէ, այլ այս որսն վայրագ կինձն է, արջն այրանդակ կամ հպարտ առիւծն, վասն զի աղմուկն միշտ մի և նոյն տեղն է ուսկից շունք երկար և երկչոտ կաղկանձանօք կ'ուռնան. չարաբարոյ թշնամին կը գտնեն, որք քաղաքավարութեամբ միմեանց կուտան պատիւն յառաջադոյն յարձակման։

Այս ձայն աղիտաբեր դառնապէս կը հնչէ իւր ականջաց՝ որ անցնելով կ'երթայ յանկարծակիի բերել սիրտն, և սիրտն ընկճեալ անտուգութեան ու դալկութեան երկչոտութեան ներքեւ, կը կասեցնէ զանձնիւր զդայարանսն անզօր սառուցմամբ մի, նման զօրականացն՝ որոց հրամանատարն դամմի խոյս տայ բանակէն, նոքա ևս կը փախչին վատութեամբ և չեն համարձակիր այլ ևս խիզախել դաշտին վրայ։

Այսպէս ինք դողահար սարսափման որս լինելով, մինչեւ որ սթափեալ յինքն կոչէ զուշն ցրուեալ, կըսէ անոնց թէ ինչ որ զինքը կ'ահարեկէր ցնորք մի էր միայն անպատրուակ, տաղայական սխալանք, և կը հրամայէ անձին չդողալ այլ ևս, դադրիլ յահուդողէ։ — Նոյն բոպէի կը տեսնէ վարազն շահատակեալ։

Որոյ բերանն վերերբերան համայն կարմիր ե-բանգեալ, կարծես կաթն յարիւն խառնեալ, վերստին աստուածուհին սարսափահարեալ քըստմունս 'ի ջիղը կը խլրտին և կը մղեն զինք յիմարաբար վազել, բայց չգիտեր թէ ո՛ւր, կ'ընթանայ մի կողմ, ապա չուզեր անտի հեռանալ և յետս դառնալով իբր մարդասպան կ'ամբաստանէ վարագն։

Հազար հակաշարժմունք հազար ուղի փոխել կուտան, կ'երթայ այն կողմն ուրկից արդէն դարձած էր. իւր յոյժ երագ ընթացքն այժմ դանդաղ կը թուի և արբեալի մը նման կը քայլէ յաճախ հանգիստ առնելով, ամփոփելով ուշադրութիւնն, այլ բանի մը վրայ չյանգիր, կը կամի ամեն ինչ ընել, այլ ոչինչ կընէ։

Ահա կը հանդիպի որսի շանց միոյն մացառի մէջ գալարեալ և ընչասպառ, հէգ անասնոյն կը հարցնէ թէ ո՞ւր էր իւր տէրն, հոն ուրիշ մը կը տեսնէ որ նորա վերքն կը լիզէր, միակ բաստան դիւրաբոյժ թունաւորեալ վիրաց համար, անդին միւս մը որ թախծութեամբ գլուխն խոնարհեցուցած է, դիցուհին կը խօսի նոա այլ սա կաղկանձանօք կը պատասխանէ։

Հազիւ թէ դադրեցաւ իւր աղմկէն՝ ուր չարիք կը հնչէր, մի այլ ոռնացող գետնակալս բերանիւ, թխաթոյր և դեղասղեւ, ձայնարձակ երկինքն 'ի վեր կաղաղակէ, ուրիշ մը, յետոյ մի այլ ևս կը պատասխանեն նոա հարկանելով զերկիր հպարտ

պոչերովն, շարժելով մրթեղերծ ականջներն, արեամբ ներկեալ մէն մի քայլ։

Տեսէք, ի՞նչպէս աշխարհիս թշուառ մարդիկք կ'ահարեկին երևոյթներէ, ցոյցերէ և հրաշքներէ, զորս երկար ատեն դիտեցին խռովայոյզ աչօք և որք ընուն զանոնք չարագուշակ մարգարէութեամբք. այսպէս և յայտ յանդիման Աստղկան բօթալից նշաններ, կ'զգայ թէ կ'սպառի շունչն, ապա հառաչելով կը զայրագնի ընդդէմ մահու։

«Բռնաւոր դժներես, յոռեգէմ, վակժոյժ, մնաղուրկ, քստմնելի ոսոխ սիրոյ, « — այսպէս կըշտամբէ մահը, — » պատկեր կեղծաւոր ու աղիտաբեր. որդ գետնի, զի՞նչ կը խորհիս չիջուցանելով գեղեցկութիւնն և յափշտակելով նորա կեանքն, որոյ գեղեցկութեան հետ շունչն մինչ կ'ապրէր, վարդի փայլն և մանիշակի բուրումն պիտի յաւելուին։

«Եթէ մեռած է, — ո՛հ ոչ, անհնար է որ նորա գեղեցկութիւն տեսնելով, համարձակիս զայն հարկանել, — ա՛հ, այո՛, հնար է, զի դու չունիս աչք տեսնելու, քո տեսլութիւն նոյնպէս ըստ արկածի կը զարնէ. քո նպատակն է զառամեալ անկար տարիքն, այլ քու նենգամուղ նիզակդ վրիպեալ յայս թիրախ կ'երթայ պատառել մանկան մի սիրտն։

«Եթէ միայն զգոյշ կա՛ց ըսած լինէիր դու նմա, կը խօսէր նա, և ձայնը լսելով քո զօրութիւն ուժաթափ պիտի լինէր։ Այս հարուածի համար բաղդին նզովք 'ի գլուխդ պիտի թափին, անոնք կը հրամայեն քեզ անպիտան խոտն քաղել, իսկ դու կը խլես վարդն։ Սիրոյ գեղարդն միայն կը պարտէր հասնիլ անդ, և ոչ տէգն ոսկեազ մահու։

«Կ'ըսեմ՝ երբէք արտասուք այսպէս լալիւն մը դրդռելոյ համար։ Առ ինչ ծառայէ ողբն դառնալէտ։ Է՞ր փակեցիր այն ականողիքն 'ի քուն յաւիտենական՝ ոյք ամեն աչաց կ'ուսուցանէին հայիլ անդ։ Այլ ևս չտառապիր բնութիւնն մահատու սաստկութենէդ, զի խստութեամբդ տապալեցիր իւր ընտրելագոյն գործ»։

Զոյգ ընդ բանին, ընկճեալ և յուսակտուր, կը խոնարհեցնէ գաչերն, իւր դրունք կը կասեցնեն բիւրեղեայ ալիքներն որք հոսելով կուգան իւր գեղավարդ զոյգ այտերէն 'ի քաղցրահեշտ ջրանցն ծոցոյն. սակայն անձրեւն արծաթեայ կը մղէ իւր անցքն արդելող դռներն, և յորդահոս ընթացիւքն զայնս բանալու դուն կը գործէ։

Ո՜հ ինչպէս ականողիքն և արտասուք կը փոխանակեն միմեանք։ Աչերն յարտօսր ողողեալ, արտօսրն յաչս իւր, կրկին բիւրեղ ընդ որ ցայտէ կրկին վիշտ և որ բարեկամ հառաչք կուգան

ցամքեցնել։ Որպէս մրրիկ օդոյ մը մերթ հողմ և մերթ անձրեւ կը տիրեն, իւր հառաչք կը ցամաքեցնեն զայտերն և արտօսր կը թանայ վերստին։

Մշտանորոգ կրքեր դիզեալ կը կուտակին իւր անփոփոխ ցաւոց վրայ, կարծես կը մրցին թէ ո՞ր վիշտ նմա պատշաճի առաւել. ամենն ևս ընդունուած, իւրաքանչիւրն այնպիսի բուռն վիշտ մը կը ցուցնէ, որ մէն մի եղանակ ցաւոց յիւրում կարգի նախամեծար համարուի, այլ սակայն ոչ մին լաւագոյն է, յայնժամ միահաղոյն խմբեալ ինչպէս ամպեր բարդ 'ի բարդ՝ որք կը խորհրդակցին դէշ օդ մը ընել վճռելու համար։ —

Սոյն վարկենին 'ի հեռուստ կը լսէ որսորդի մը ձայնը, երբէք սոնտուին երգն այնքան հաճոյ չթուեցաւ կաթնկեր մանկան, այս ձայն լիայոյս յաջողեցաւ վանել այն աղիողորմ նկարն որ կը վրդովէր զհոգին. զի ահա խնդութիւն կը նորոգի և կը շողոմէ զայն յուսով թէ՝ այս Ադոնիսի ձայնն էր։

Կրկին յորդել կ'սկսին արտասուք և կը մնան փակեալ աչաց մէջ ինչպէս մարգարիտն 'ի բաժակ, սակայն մերթ արեւելեան մարգարտաց մին կուտայ խոյս այնկէց որ իւր այտն կը փութայ հալել զայն, կարծես կը մերժէ ողմուտ յերկիր գլորելովն մի գուցէ լուանայ կեղտ գետին, որ արբչիւ կը դառնայ երբ հեղձեալ կը համարի զինք։

Ո՛վ սէր որ չընծայես հաւատ դիւրաւ, քանի՞ նորօրինակ թուի հաւատալն կամ յոյժ դիւրագայթ լինելն. երանութիւնդ ինչպէս չուառութիւնդ ծայրահեղ են, անյուսութիւն և յոյս հաւասարապէս ծիծաղաշարժ կ'ընեն զքեզ. մին չողոքորթէ անհաւանական ենթադրութեամբք, միւսն իսկոյն կ'սպաննէ զքեզ հաւանական երկիւղիւք։

Այժմ կը քակտէ կտաւն զոր հիւսած էր։ Ադոնիս կ'ապրի, և մահն չէ երբէք պախարակելի, ինք չէր որ վայրիկ մը յառաջ կ'ամբաստանէր զմահ իբր անարդ, արդ պատուոյ տիտղոսներ կ'ընծայէ անոր դժխեմ անուան, զայն թագուհի կը կոչէ գերեզմանաց, գերեզման արքայից, սէգ տիրուհի ամենայն մահկանացու էրաց։

«Ոչ, ոչ, կ'ըսէ, քաղցր մահ, կատակ մի էր ըրածս, ուստի ներէ ինձ, բուռն երկիւղ մը զգացի վարազին հանդիպելովս, արիւնարբու գազանն չգիտեր գթալ, անագորոյն է միշտ։ Նոյնպէս ստուեր սիրելի, — կը պարտիմ խոստովանիլ ճշմարտութիւնը, — նախատեցի զքեզ, քանզի կ'երևնչէի թէ մի՛ իմ սէր վախճանած լինի։

«Իմ չէ յանցանք, վարազն գրգռեց լեզուս, լուծէ այնկէ քո վրէժ անաչառելի դշխոյ։ Ինքն է, այն գարշելի արարածն որ քեզ մեղանչեց. իմ քանիցս երկրորդած անիծիցս միակ հեղինակն է. միւսն երկու լեզու ունի, և կինն երբէք չը գիտցաւ երկուքն միանգամայն գործածել առանց տասն կանանց խելքն ունենալու»։

Այսպէս ներում կը խնդրէ իւր արագահաս կասկածանաց համար, յուսալով որ դեռ կ'ապրէր Ադոնիս, և որպէս զի իւր գեղեցկութիւն աւելի ևս ապահովի, կը ջանայ շնորհս գտնել յաչս մահու։ Ախոյենից, արճանաց և տապանաց վրայ կը խօսի նմա, և կը նկարագրէ իւր յաղթանակներ, քաջութիւնք և փառքն։

«Ո՛վ Արամազդ, կը գոչէ, քանի՞ տխմար էի ես, տկար և պարզամիտ, լալ անոր վրայ որ կ'ապրի տակաւին, և որ չկրնար մեռնիլ առանց ոչնչացնելոյ զմարդկային սեռն, զի ինքն մեռեալ, գեղեցկութիւն ևս մեռեալ է իւր հետ, և անդամ մի որ գեղեցկութիւն մեռնի, չյապաղէ խաւարն հասնիլ։

«Տի՛անդր, սէր ախտացեալ, աւելի երկիւղած ես քան թէ դանձով բեռնաւորեալ անձ մը չբրջասատեալ յաւազակաց, սնոտիք՝ ոյց ոչ աչք, ոչ ականջք չեղեն վկայող կը խոովեն վատ սիրոյդ խարեսատիր վրդովմամբ»։ Ըսաւ և լսեց իսկոյն զուարթ ձայն մի փողոց, և ահա դիցուհին 'ի վեր կ'ոստոստէ կայտառելով, մինչ խուն մի յառաջ ընկճեալ նուաճեալ էր։

Կը խոյանայ որպէս բազէն 'զկնի որոյն, խոտն դալար չը հակի ամենեւին իւր ոտից ներքեւ,

այնչափ թեթեւ կը կոխէր, և յաճապարելն իւր կը տեսնէ, ո՛վ աղէտ, յաղթանակ վատաղդի կընճին ընդդէմ կաթողին իւր ցանկալւոյն, կը տեսնէ և աչերն կարծես խողխողեալ յայս տեսիլ, կը ծածկուին նման աստեղց զորս ահաբեկէ արեւու լոյսն։

Կամ իբր խղու�՝ որոյ թուլամորթ եղջիւրք այն ինչ շշափեալ, վիրաւոր յետս խուսելով կը մնայ իւր թեփալից անձաւին մէջ և անդ կը մնայ ընդ երկար սառերի մէջ, ամէն ինչ յինքն կուտեալ չհամարձակի վերսին երեւիլ, այսպէս յայն տեսիլ արիւնաշաղախ, աչերն փութացին գլխոյն մթին ու խորախոյթն խառնչի մէջ,

Ուր կը վարեն իւրեանց սպաշոն և կը դնեն զիւրեանց լոյս ընդ տրամադրութեամբ վրդովայոյզ ուղեղի, որ կը հրամայէ միանալ ահեղադէմ գիշերի և չխոցել այլ ևս հայեցուածիւք զսիրան։ որպէս խառնեալ թագաւորն 'ի դահ, որոց հրաղուրանաց կ'արձակէ հառաչս տրտմայուշ։

Յայնժամ անձնիւր զգայարան, հպատակ հարկատու սրտի, կը դողդողէ։ ինչպէս արգելափակ հողմն յերկիր նկրտելով բանալ իրեն ուղի մը, սարսռէ 'ի խորոց զգետին, և յայս ցնցում հոգիք մարդկանց ցրտասարսուռ ահիւ հարեալ, այսպէս և ինքնիշխան զգայարանն ուժգին ըմբռնելով զամեն մաս մարմնոյն, որ իւր աչկունք անդրէն դուրս կը ցայտեն իւրեանց մթին անկողնէ։

Եւ բացուելով կը դարձնեն ցաւօք լոյսն լայնարերան վէրքին վրայ որ վարազն բացած էր Ադոնիսի 'ի գիրգ կողն, որոյ շուշանավայլ սպիտակ մարթն ողողեալ էր ծիրանեվառ արտասուօք ոյր վէրքն հեղած էր 'ի լալիս։ չի կար անդ իւր շրջակայքն ծաղիկ, բոյս, ոստ կամ տունկ մի որ չըմպէր նորա արիւնէն և չարիւնէր իր հետ։

Հէդ Աստղիկն կը դիտէ զայս մեծաշուք համակրութիւն։ գլուխն ուսոց մէջն վրայ խոնարհած կը թողու, իւր յուսահատութիւն լուռ է, ցնորքն մոլեգնեալ։ կը խորհի թէ նա չկրնար մեռնիլ և չէ մեռած։ ձայնն կը նուազի, յօղերն չեն ծալուիր այլ ևս, աչերն զայրացած են նախ քան զժամն արտասուելուն։

Ամենայն ակնթարթ աչօք կը նայի այն խոցին, որ լոյսն շլացեալ եռապատիկն կը տեսնէ վէրքը։ կշտամբեալ կը յանդիմանէ զիւր ականողիսն վայրագ ոյք կը բաղմապատկեն վիրաց թիւն անդ ուր ոչ մին հարկ էր լինել։ Թուի թէ երկու դէմք ունի, և մէն մի անդամ կրկին, զի յաճախ ակն է խաբուսիկ, մինչ ուղեղն յուզեալ է բոլորովին։

«Իմ լեզու չէ կարող ամենեւին յայտ առնել զիմ վիշտ Ադոնիսի մը համար, այլ սակայն, կ'ըսէ գեղուհին, երկու մեռեալ կը տեսնեմ։ Հառաչանքս սպառած են, դառն արտասուքս ցամքած, աչք իմ 'ի հուր փոխեցան, սիրտս 'ի կապար։ կա-

պար սրտա ծանրակշիռ, հալէ՛ աչացս հրոյն մէջ, այսպէս կարող պիտի լինիմ մեռանիլ բոցավառ սիրոյս կաթիլներէն։

«Աւա՜ղ, չուառ աշխարհ, ինչ դանձ կորուսիր։ Ո՞ր դէմք կ'ապրի զոր տեսնելու արժան լինի։ Ո՞ր լեզու կայ դաշնակաւոր։ Ի՞նչ կայ անցելոյն մէջ կամ հանդերձելոյն սէգ վառացդ առարկայ։ Գիրգ են և քաղցր ծաղկունք, գունով նորավառ, դեղով փթթաղարդ, այլ ճշմարիտ գեղն քաղցրահեշտ ապրեցաւ և մեռաւ նորա հետ։

«Ոչ մի արարած չկրէ այլ ևս գտակ կամ շղարշ, ոչ արեգակն, ոչ հողմ չպիտի ջանան այլ բնաւ տալ ձեզ համբոյր, զի չունիք գեղեցկութիւն կորուսանելու, և երկիւղի չի կայ ձեզ տեղի. արեւն կ'այպանէ զձեզ, և հողմն կը սուլէ ձեզ. բայց մինչ կ'ապրէր Ադոնիս դեռ, արեւն ընդ դառնաչունչ հողմոյն յածեալ կը թափառէին իւր զոյգ գողեր նորա դիմաց գեղն յափշտակելու համար։

«Երբ իւր գտակն կը դնէր գլուխը, խնդամիտ արփին կը հնարէր թափանցել անոր եղերաց ներքեւ, և հողմն զայն շարժելով կը վերցընէ, որպէս զի գամ մի գեղին լինայ, ինք կարենայ հրճուիլ Ադոնիսի հերաց հետ։ Ցայնժամ կուլայր Ադոնիս, և խսկոյն գթալով 'ի մատաղ տիս նորա, կը մրցէին երկուքն ևս թէ ո՞րն զարտօսրն աւելի յառաջագոյն պիտի չորցնէ։

«Նորա դէմքն տեսնելու համար առիւծն թափոց եաին կը թափառէր, վասն զի չէր ուզեր զայն ահաբեկել. մինչ կ'երգէր՝ վագրն զմայլեալ յայն նուագ, պիտի մոռիկ ընէր ընտելացեալ և վայելչապէս. եթէ խօսէր՝ գայլն պիտի թողուր զիւր որս և չի պիտի յօշոտէր զանմեղ գառնուկն։

«Մինչ իւր ստուերն կը դիտէր առուակին մէջ, ձկունք կը տարածէին իրենց ոսկեգոյն թեւեր, երբ նոցա մօտ գտնուէր. թռչունք կը հրճուէին յոյժ, ոմանք կը դայլայլէին, այլք կոցաւ կը բերէին անոր թութ և կարմրուկ կեռաս, զանոնք ակնարկով կը սնուցանէր, իսկ նոքա զինք պտղօք կը կերակրէին։

«Այլ այս զազիր, ահարկու վարազն ոգնեկընդիմի, որ երկրասիր աչն կ'որոնէ միշտ գերեզման, չտեսաւ երբէք նորա գեղեցկութիւն, փորձն վկայ գործոյն. եթէ տեսնէր դէմքը, ո՞հ անշուշտ թէ անոր փարիլ կ'ուզէր և համբուրել, ահա այսպէս է որ սպաննեց զայն։

«Այս է, այո՛, այս, այսպէս սպաննեցաւ Ադոնիս, յարձակեց չեշտեալ սլաքաւն վարազին վրայ, որ երբէք չարեր իւր ժանիքն նորա դէմ, այլ կ'ուզէր զինաթափ ընել զինք համբուրիւ մը, և իւր քով վազելով, սիրատարփ խոզն անզգուշութեամբ մխեց 'ի մատաղ կողն Ադոնիսի իւր գլուխն։

«Եթէ նման ատամներ ունենայի ես, խոստովանիմ, 'ի համբոյրս իմ կենասպառ կ'ընէի նախ ես զինք, սակայն մեռաւ, իմ մանկամարդ հասակն չկրցաւ վայելել զիւրն, հազար եղո՛ւկ ինձ» կ'ըսէ և կ'լայնայ գետնատարած, և կ'արտասուրէ զերեսն յարիւն Ադոնիսի։

Կը դիտէ նորա շրթներն, գունատեալ են. ձեռներն կը բռնէ, սառած. իւր յուսակտուր պատմութիւնն կը մրմնջէ ականջին, իբր թէ լսէին իւր հեգ և վշտախառն բառեր. 'ի վեր կ'առնու աչերն վակող վարագոյրն, այլ աւա՛ղ, երկու ջահեր միայն կան անդ շիջեալ որք խաղաղին խաւարի մէջ։

Այս երկու հայելիք յորում կը դիտէր աստուածուհին բիւր անգամ զիւր պատկեր, չեն փայլակեր այլ եւս. կորուսին այն զօրութիւնն որով սակաւ ինչ յառաջ կը գերազանցէին, և մէն մի դեղեցկութիւն Ադոնիսի կողոպտեցաւ իւր իշխանութենէ։ «Հրաշալիքդ դարուց, կը գոչէ, ահա յայսմ զայրանամ, որ դու մեռեալ լինելով, դեռ օրն լուսաւորէ։

«Քանզի դու մեռար, կը գուշակեմ ուրեմն աստ թէ այսուհետեւ սէրն չի պիտի լինի առանց վշտի, նախանձն պիտի ուղեկցի անոր, սկիզբն քաղցր, սակայն վերջն անախորժ։ Երբէք զուգակիւռ, այլ միշտ վեր կամ վար, այնպէս որ համայն հաճոյք սիրոյ չի պիտի հաւասարին իւր ցաւոց։

«Կեղծ, յոդոդդ, լի նենգութեամբ, 'ի մի չունչ ծնանելն և թարշամելն տեսնուի. յատակն թունալից, գագաթն յանոյշ թաթաւեալ պատրող խորաթափանց խակ աչաց. հզօրագոյն մարմինն նաև ամենեւին ուժաթափ պիտի ընէ, խելօքն պիտի դառնայ անլեզու և յիմարին բացուի լեզուն։

«Ինայող պիտի լինի, միանգամայն յոյժ զեղխ. պիտի ուսուցանէ զառամեալին թուել աքանչելապէս ոտն 'ի պար, և խառնակենցաղ ցոփին առաւել զգոյշ. պիտի ամայացնէ զհարուստ մեծատունն, ընու զաղքատն գանձիւք. խելաղուրկ ցընորամտութիւնն պիտի փոխէ յանապակ քաղցրութիւն. պատանիք պիտի ծերացնէ և զառամեալք դարձնէ 'ի մանկութիւն։

«Պիտի տարակուսի մինչ երկիւղի չունի պատճառ. չվախէ բնաւ ուր որ յոյժ առաւել երկրայելի էր. կը լինի գթառատ և խստարարոյ միանգամայն, և ճշմարիտ երեւելոյն մէջ այնքան աւելի պատրող. թիւր՝ արձակ համարձակ գալստեան մէջ խակ, կ'ահաբեկէ քաջասիրտն, խրախուսէ վատթարն։

«Պատճառ կը լինի մարտի և անագորոյն արկածից, գժտութիւն ձգելով հօր և որդւոյն մէջ. հպատակ և ստրուկ գլխակոր անձնիւր դժդոհութեան, ինչպէս մարմին չոր և դիւրածախ հպատակ և ստրուկ է հրոյն. որովհետեւ մահն կորզեց

յինէն զիմ սէր առաջին դարնան, դէք որ կը սի-
րեն առաւել չսիտի ճաշակեն զիւրեանց սէր»։

Մինչեւ յայնժամ մանուկն իւր քով երկրատա-
ռած կը ցնդէր իւր աչաց հանդէպ իրրեւ շոգի,
և նորա յորդահոս արեամբ ներկեալ երկրէն կը
վերթիր ծաղիկ մի բոսորագեղ սիսակացեալ 'ի
սպիտակ, նկար կենդանի դալուկ այտիցն և հե-
ղած բոլորաշրթի արեան յիւրեանց սպիտակութիւն։

Կը ծռէ գլուխն դեռաբոյս ծաղիկն հոտոտելու
և որոյ բուրումն կը նմանեցնէ իւր Ադոնիսի շըն-
չին։ «Այս ծաղիկ կուրծքիս վրայ պիտի հանդչի,
կ'ըսէ, զի մահն յաւիշտակեց զԱդոնիս այնկէց»։
Կը կտրէ 'ի բնոյն և այն խոցէն կը հոսէ մի կանաչ
հիւթ որ կը նմանեցնէ նորա արտասուաց։

«Թշուառ ծաղիկ, կ'ըսէ դիցուհին, քաղցր բոզ-
բոջ հոգն յոյժ ևս խնկաբոյր, այսպէս և քո հայրն
կը թանայր դաշերն փոքրիկ վշտի մը համար։ Միայ-
նակեաց աճումն կը սիրէր միայն, այս քուկդ ևս
է, բայց գիտցիր որ արժան է կուրծքիս վրայ
դքեզ թարմացնել քան իւր արեան մէջ։

«Հոս էր հորդ մահիճն, հոս կուրծքիս մէջ· քո
իրաւունքն է, վասն զի արեամբ դու մերձագոյն
ես նմա· աւա՛ղ, հանդի՛ր ուրեմն այս գոգաւոր
որորանի մէջ· իմ սիրտ մշտարարաս տիտի որորէ
դքեզ գիշեր և ցերեկ· չի տիտի անցնի բոպէ մի

առանց համբոյր մը տալու իմ քաղցրաբոյր սիրոյ
ծաղիկիս»։

Խոնջեալ յաչխարհէ, կը հեռանայ Աստղիկ և կը
ղուգէ արծաթափայլ գեղափետուր աղաւնիներն,
նոցա աշխոյժ օգնութեամբ իրենց տիրուհին իւր
թեթեւաշարժ կառաքն փութով կը խոյանայ յան-
պարոյր ունայնութիւն երկնաղուարթ։ Կ'ընթա-
նան աղաւնեակք դէպ 'ի Պափոս, ուր իրենց դըշ-
խոյ մոտադիր է կենցաղավարիլ և չերեւիլ այլ ևս
ոչ ումեք։

ՎԵՐՋ

4365
24540
24541
24542
24543
24544

ՀՀ Ազգային գրադարան
NL0652624

ՀՀ Ազգային գրադարան
NL0652623

ՀՀ Ազգային գրադարան
NL0652627

ՀՀ Ազգային գրադարան
NL0652621

ՀՀ Ազգային գրադարան
NL0652626

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0652625

ՀՀ Ազգային գրադարան
NL0652619

1254
79

ԿՈՂՄՈՒՏԻՆ Ա. ԲԱՂԴԱՆՈՅՇ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չախմախճիլար Մեծ Նոր խան թիւ 5-6